

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ՃԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱՃՄԱՎԱՐԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ

2016

2020

ՁԵԿՈՒՅՑ

2019/2020 ՈՒՍԱՐՈՒՄ

ՆԱԽԱՏԵՄՎԱԾ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ
2020

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2016-2020 ԹԹ.

ԶԵԿՈՒՅՑ

2019/2020 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	4
I. Որակյալ կրթություն	4
II. Արդիական հետազոտություն և նորարարություն	15
III. Հանրային ներգրավում և ծառայություններ	23
IV. Որակյալ մարդկային ռեսուրսներ	28
V. Որակյալ ենթակառուցվածքներ	32
VI. Որակյալ ծառայություններ	36
VII. Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն	42
VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում	50
IX. Միջազգայնացում և գործակցություն	60

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի պետական համալսարանը 2019/2020 ուսումնական տարում իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (ՌԾ) սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Ըստ ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանի՝ նախատեսված է 2019/2020 ուստարում իրագործել ռազմավարական մի շարք խնդիրներ: Նշված ժամանակահատվածում այդ խնդիրների իրագործմանը միտված մի շարք գործողություններ իրականացվել են սահմանված ժամկետում, իսկ որոշ գործողություններ չեն իրականացվել կամ թերի են իրականացվել տարբեր պատճառներով:

Սույն զեկույցում ներկայացվում է 2019/2020 ուստարում նախատեսված խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից:

«Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի *Խնդիր 1.1*-ով սահմանված է. «*Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ*»: Խնդրի իրականացմանն ուղղված մի շարք գործողություններ կատարվել են նախորդ ժամանակահատվածներում:

Խնդիր 1.1-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «*Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր*»:

2019/2020 ուստարում միջմասնագիտական մագիստրոսական նոր կրթական ծրագրեր չեն ներդրվել, սակայն մշակման փուլում են նման երկու կրթական ծրագիր՝ «Շուկայագիտություն» (Մարքեթինգ) և «Թարգմանությունը զբոսաշրջային ոլորտում»:

Խնդրի *7-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ*»:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ուսումնական, մասնագիտական և մանկավարժական պրակտիկաներ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգի»: ԵՊՀ գիտական խորհրդի 2020 թ. մարտի 12-ի թիվ 11/3 որոշմամբ հաստատվել են ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը: Այդ փաստաթղթի 10-րդ կետի համաձայն՝ մագիստրանտի ղեկավարումը ներառում է նաև պրակտիկայի կազմակերպման աշխատանքները: Պրակտիկան կազմակերպելու համար թեզի գիտական ղեկավարի բեռնվածության ժամերին ավելացվել է 4 ժամ:

Արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով 2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակում ուսումնական պլաններով նախատեսված

պրակտիկաների մի մասը կազմակերպվել է հեռավար՝ օգտագործելով տարբեր հարթակներ: Առցանց պրակտիկաների անցկացման համար, ելնելով մասնագիտության առանձնահատկություններից, մշակվել են համապատասխան մեխանիզմներ:

Հաշվի առնելով ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները՝ կնքվել են նոր պայմանագրեր, ինչի արդյունքում ընդլայնվել է մասնագիտական պրակտիկայի անցկացման վայրերի աշխարհագրությունը: Նոր կազմակերպությունների ներգրավվածությունը մասնագիտական պրակտիկաների անցկացման գործում ավարտական կուրսերի ուսանողներին նոր հնարավորություններ է ընձեռում:

Խնդիր 1.2-ով սահմանված է. «Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Մտեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով»:

Դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոնի գործառույթները դրված են Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության վրա:

Խնդիր 1.2.1-ի ապահովման նպատակով դեռևս նախորդ հաշվետու տարում ERASMUS+PRINTeL նախագծի շրջանակներում, ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության դասախոսների որակավորման բարձրացման բաժնի համակարգմամբ, եվրոպական երկրներում վերապատրաստվել են 16 վերապատրաստողներ՝ ակտիվ ուսուցման տարբեր նորարարական մեթոդների ուղղություններով: Նրանք այժմ ակտիվորեն ներգրավված են ԵՊՀ դասախոսական կազմի վերապատրաստման աշխատանքներում: Նախորդ տարում նրանց կողմից վերապատրաստվել է 260 դասախոս, իսկ հաշվետու տարում, դասախոսների վերապատրաստման նոր դասընթացների ներդրումից և կանոնավոր իրականացումից հետո, վերապատրաստել է ևս 500 դասախոս:

Ամբողջովին վերափոխվել է Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության՝ դասախոսների որակավորման բարձրացման բաժնի գործունեության ծրագիրը (2019-2021 թթ. գործունեության ծրագիրը հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի 2019 թ. փետրվարի 21-ի թիվ 6/4 որոշմամբ): Այն ներառում է ոչ միայն ակտիվ և տեխնոլոգիապես հագեցած ուսուցման վերապատրաստման դասընթացներ, այլև անհատական և խմբային

խորհրդատվություններ, դասավանդման և ուսումնառության նորարական մեթոդների վերաբերյալ սեմինարներ, աշխատաժողովներ, տարեկան ֆորումներ:

Վերապատրաստումներն արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով ERASMUS+PRINTeL նախագծի միջոցներով գնվել են համապատասխան սարքավորումներ ակտիվ ուսուցման երեք լսարանների և դասախոսությունների տեսաձայնագրման մեկ ստուդիայի կահավորման համար:

Խնդիր 1.2.2-ով նախատեսված է. *«Ձարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը»:*

ԵՊՀ-ում դասավանդման մեթոդների կատարելագործումը խթանելու, արդի մեթոդների կիրառմանը, ինչպես նաև լավագույն փորձի տարածմանը նպաստելու նպատակով 2019/2020 ուստարում սահմանվել է «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթ, որը բաղկացած է երկու փուլից: Առաջին փուլով կազմակերպվում են մրցույթն ու մրցանակակիրների ընտրությունը: Երկրորդ փուլով լավագույն փորձի տարածման նպատակով առաջին փուլին հաջորդող ուսումնական տարվա ընթացքում կատարվում է մրցանակակրի առաջարկած մեկ ամբողջական դասընթացի տեսաձայնագրում: Առաջին մրցույթը հայտարարվել է 2019/2020 ուստարվա համար, և 2020 թ. մայիսի 16-ին մրցութային չորս անվանակարգերում հաղթող է ճանաչվել ԵՊՀ 10 աշխատակից: Սկսվել է տեսաձայնագրման գործընթացը:

Շարունակվել է «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» համաձայն (կարգը վերանայվել և նոր խմբագրությամբ հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի 2020 թ. մայիսի 26-ի նիստում) ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների կատարման համար լրավճարների տրամադրումը: Համալսարանի 222 դասախոսի վճարվել է լրավճար, որի գումարը կազմել է 32.307.625 դրամ:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Մտեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ»:*

Այս գործողության իրականացման նպատակով մշակվել է համապատասխան մեթոդական ձեռնարկ, որի հիման վրա պետք է կազմակերպվեն դասախոսների վերապատրաստումներ՝ գնահատման նոր մոտեցումներին ծանոթացնելու համար:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ուսումնասիրել դասավանդման, ուսումնասիրության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով»:*

ԵՊՀ 2016-2020 թթ. ՌԾ «Որակյալ կրթություն» նպատակի իրականացմանն ուղղված Խնդիր 1.1.2 և 1.1.4, ինչպես նաև 1.2.4 գործողությունների կատարման համար, սկսած 2016/2017 ուստարվանից, մասնագիտական կրթական ծրագրերը վերամշակվել են որակավորումների ազգային և ոլորտային (առկայության դեպքում) շրջանակներին համապատասխան, ինչպես նաև այլ կրթական ծրագրերի բենչմարքինգի հիման վրա: Օրինակ՝ համաձայն «Կրթական ծրագրերի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույցի» (ԵՊՀ ՈԱԿ, 2016)՝ կրթական ծրագրի մասնագրում նշվում են այն կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք հաշվի են առնվել տվյալ կրթական ծրագրի մշակման ընթացքում: Հարկ է նշել, որ մի շարք մասնագիտությունների (քիմիա, աշխարհագրություն, երկրաբանություն և այլն) կրթական ծրագրերը մշակվել են՝ հիմնականում հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ այլ երկրների առաջավոր բուհերի ծրագրային փորձը, իսկ արդի կիրառական ոլորտներին առնչվող կրթական ծրագրերը՝ ոչ միայն ԱՊՀ-ի, այլև փոխառելով նաև ԱՄՆ-ի և Եվրոպական մի շարք համալսարանների փորձը: «Կիրառական մանրէաբանություն» մագիստրոսի կրթական ծրագիրը մշակվել է Ամերիկայի և Եվրոպայի Մանրէաբանական ընկերությունների դաշնության խորհրդատվություններով, ինչպես նաև ընդօրինակվել են Գերմանիայի, ԱՄՆ-ի մի շարք համալսարաններում առկա նմանատիպ ծրագրերը:

Մեկ այլ՝ «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մագիստրոսի կրթական ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Միացյալ Թագավորության Որակի ապահովման գործակալության հոգեբանական խորհրդատվության ծրագրային կողմնորոշիչները, իսկ արևմտյան բուհերից ուսումնասիրվել են Կանադայի (The University of British Columbia (MA in Counseling Psychology)), ԱՄՆ-ի (University of Minnesota (MA in Counseling Psychology)) հավատարմագրված կրթական ծրագրերը:

ԵՊՀ-ում աշխատանքներ են իրականացվում տարբեր համալսարանների հետ կրկնակի դիպլոմով նոր կրթական ծրագրեր մշակելու ուղղությամբ: 2019/2020 ուստա-

րում ԵՊՀ-ում գործել են կրկնակի դիպլոմով 14 տարբեր մագիստրոսական ծրագրեր, որոնք, մասնավորապես, իրականացվել են ՌԴ Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարանի («Ռուսաց լեզու և գրականություն», «Տնտեսագիտություն», «Ֆարմացիա», «Միջազգային հարաբերություններ» և այլ մասնագիտություններով), ՌԴ Բելգորոդի Ազգային հետազոտական համալսարանի («Կենսաբանություն» և «Ֆարմացիա» մասնագիտություններով), Լե Մանի համալսարանի, Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի, Բուրգոնի Ֆրենչ Կոնտե համալսարանի հետ («Օպտիկա», «Կիրառական կենսաբանություն» մասնագիտություններով): Բացի այդ, երկար տարիներ գործում է Ուրալի դաշնային համալսարանի հետ «ԱՊՀ երկրների Ցանցային համալսարան» ծրագիրը՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ: Համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, համագործակցելով Կիևի՝ Տարաս Շևչենկոյի անվան ազգային, Բելառուսի պետական և Թբիլիսիի՝ Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանների հետ, իրականացնում է «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացումը Կովկասում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրը: Ծրագիրն արդեն իսկ ունի 174 շրջանավարտ 14 երկրից: Ծրագրում ներգրավված ուսանողների 30-50 %-ը օտարերկրյա ուսանողներ են:

«Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի *Խնդիր 1.3*-ով սահմանված է. **«Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը»:**

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար»:*

Համաձայն «ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի» (նոր խմբագրությամբ, հաստատված ԵՊՀ ԳԽ 2019 թ. հունիսի 27-ի թիվ 12 նիստում)՝ ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերը պետք է ենթարկվեն ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման:

2017/2018 ուստարվանից ԵՊՀ-ում գործարկվել են նոր մագիստրոսի կրթական ծրագրերը, որոնց իրականացման առաջին շրջափուլի ավարտին՝ 2019/2020 ուստարում, մեկնարկել է դրանց մշտադիտարկման (մոնիթորինգի) գործընթացը:

Մոնիթորինգն իրականացնելու նպատակով կրթագիտական ստորաբաժանումներում ստեղծվել են աշխատանքային խմբեր՝ կրթական ծրագրի ղեկավարի, պրոֆեսորա-դասախոսական համակազմի, ուսանողների և արտաքին շահակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ծրագրի շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման համար իրականացվել են ֆոկուսխմբային քննարկումներ մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների հետ: Այդ նպատակով պատրաստվել են համապատասխան ուղեցույց և հարցաշար: Ֆոկուս-խմբերն անցկացրել են Սոցիոլոգիայի և Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների մագիստրատուրայի 25 ուսանողներ՝ իրենց մասնագիտական պրակտիկայի շրջանակում: Ֆոկուսխմբային հետազոտությունների արդյունքների վերլուծությունները՝ արված մասնագետների կողմից (ընտրված ասպիրանտներ Սոցիոլոգիայի և Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներից), տրամադրվել են մոնիթորինգային խմբերին՝ մոնիթորինգի հաշվետվությունները կազմելիս հաշվի առնելու համար:

Ընթացիկ՝ 2020/2021 ուստարվա սեպտեմբերին ՌԱ կենտրոնը մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ ընդհանուր զեկույց է ներկայացրել ԵՊՀ ԳԽ, որը կայացրել է համապատասխան որոշում մոնիթորինգի ենթարկված ծրագրերի վերաբերյալ:

Բակալավրի վերանայված կրթական ծրագրերի մշտադիտարկումը, համաձայն կարգի, կիրականացվի 2021/2022 ուստարվանից:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում»:

Այս գործողության իրականացմանն ուղղված՝ մշակվել է ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը, որը հնարավորություն է տալիս գնահատելու դասախոսի գործունեության երեք հիմնական ոլորտները՝ կրթական, գիտական և հասարակական՝ միահյուսելով դասախոսի ինքնագնահատումը, ուսանողների կողմից դասախոսի գնահատումը, դասախոսի գնահատումը նրա անմիջական ղեկավարի և գործընկերների կողմից: Կարգը թեև պատրաստ է, սակայն դեռևս չի գործադրվել:

Այս խնդրի իրականացմանը նպաստում է նաև «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», որում առկա են հստակ չափանիշներ երեք հիմնական ոլորտներում՝

կրթական, գիտահետազոտական և հանրային՝ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման համար: Այն հաշվետու տարում նույնպես թարմացվել է:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը»:*

«Մուդլ» համակարգը ոչ միայն հնարավոր է դարձրել հեռավար ուսուցումն ապահովելը, այլև հնարավորություն է տվել համապատասխան ստորաբաժանմանը (Ուսումնամեթոդական վարչություն)՝ կատարելու դասալսումներ և գնահատելու դասընթացների անցկացման որակը և մեթոդները:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Նախաձեռնել և իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց»:*

ԵՊՀ-ն իր առաջին ինստիտուցիոնալ հավատարմագրման վկայագիրն ստացել է 2015 թ., 6 տարի ժամկետով: Այդ ժամկետի՝ ավարտին մոտենալու հետ կապված՝ համալսարանում հաշվետու ուստարում մեկնարկել է հավատարմագրման նոր գործընթացը, որի առաջին փուլը ԵՊՀ ինքնագնահատման նպատակով ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության կազմակերպումը և համապատասխան զեկույցի պատրաստումն էր:

Այդ առնչությամբ ստեղծվել են համալսարանի ինքնավերլուծության գործընթացը համակարգող հանձնաժողով՝ բաղկացած ինը անդամից, և աշխատանքային տասը խումբ՝ ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների, որոնցից յուրաքանչյուրի կազմում՝ վեց անդամ: Բոլոր աշխատանքային խմբերում ընդգրկվել են ներկայացուցիչներ ինչպես ԵՊՀ վարչական, այնպես էլ դասախոսական/ակադեմիական և ուսանողական կազմերից:

Ինքնավերլուծությունը կատարվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թ. հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին» համապատասխան:

Չնայած համավարակի պատճառով ստեղծված իրավիճակին՝ հետևողական աշխատանքների արդյունքում սահմանված ժամկետում հայերեն և անգլերեն տարբերակներով պատրաստվել է «Երևանի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն» զեկույցը, որը ներկայացվել է արտաքին գնահատումն իրականացնող կառույց՝ Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ):

ՈԱԱԿ-ի փորձագետների կողմից դիտարկվելուց հետո զեկույցը վերադարձվել է համալսարանին՝ որոշակի ժամանակահատվածում լրամշակումներ անելու առաջարկով: Արդեն այս ուստարվա սեպտեմբերին լրամշակված զեկույցը նորից ներկայացվել է ՈԱԱԿ:

Խնդիր 1.4-ով սահմանված է. «Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների առցանց մատուցման համար»:

Արդեն ներդրված ԵՊՀ «Մուդլ» (Moodle) ուսուցման կառավարման համակարգին (ՈւԿՀ) ինտեգրվել են ԵՊՀ էլ-փոստին, «Ինտրանետ»/«ՍուպերՎիժըն» (Intranet/SuperVision) համակարգերը՝ ապահովելով անհրաժեշտ սինխրոնացում: 2019/2020 ուստարում ՈւԿՀ-ում ներդրվել է «Ուսանողական ակադեմիական տեղակազիր» համակարգը: Պայմանավորված կորոնավիրուսային համավարակով՝ ԵՊՀ բոլոր դասընթացները, ներառյալ գործնական և լաբորատոր պարապմունքները, անցկացվել են առցանց ZOOM, BigBlueButton և այլ համակարգերով: ՈւԿՀ-ում ստեղծվել է հարթակ ավարտական պաշտպանությունները պատշաճ կազմակերպելու համար: Առցանց են կազմակերպվել նաև քննությունները, վերահանձնումները և այլն: 2020/2021 ուստարում առցանց դասընթացները ևս կազմակերպվում են ՈւԿՀ տիրույթում:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար»:

Այս գործողության շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրով իրականացվել են մի շարք դասընթացներ.

1. «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» 32-ժամյա համահամալսարանական դասընթաց (154 ունկնդիր),
2. Google Classroom-ը հեռավար կրթության համատեքստում, 20-ժամյա դասընթաց (21 ունկնդիր),
3. Առցանց ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում (13 ունկնդիր),

4. Առցանց դասավանդման հմտությունների զարգացումը Moodle հարթակում (456 ունկնդիր):

Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության և Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական ու հետազոտական կենտրոնի հետ համատեղ իրականացրած աշխատանքների շնորհիվ ԵՊՀ դասախոսների մեծ մասը վարած դասընթացները տեղադրել է Moodle հարթակում՝ ապահովելով ԵՊՀ-ում հեռավար ուսուցման էլեկտրոնային ռեսուրսները:

Պատվիրվել և Հեռաուսուցման լաբորատորիայի կողմից մշակվել է «Հեռաուսուցում և կրթական այլ մեթոդներ» ինտերակտիվ էլեկտրոնային ուսուցման ներածական դասընթացը, որն էլեկտրոնային նամակով ուղարկվել է ԵՊՀ յուրաքանչյուր դասախոսի և տեղադրված է wiki.y-su.am կայքում: Բացի այդ, ՏՏ վարչության կողմից պատրաստվել են հեռաուսուցման հարթակից օգտվելու վերաբերյալ ուղեցույցներ և տեսադասեր:

Խնդիր 1.4-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով»*, իսկ 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով»*:

2019/2020 ուստարում մշակված «Հեռաուսուցում և կրթական այլ մեթոդներ» ինտերակտիվ էլեկտրոնային ուսուցման ներածական դասընթացը՝ որպես առցանց, ինտերակտիվ դասընթացի օրինակ, տեղադրվել է ԵՊՀ wiki հարթակում՝ ապահովելով բաց հասանելիություն ԵՊՀ դասախոսական կազմին: wiki հարթակը հարմար հասանելիություն է տրամադրում ԵՊՀ բազմաթիվ էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներին: Համավարակով պայմանավորված՝ ԵՊՀ բոլոր դասընթացները կազմակերպվում են առցանց, և ՈՒԿՀ տիրույթը հազեցվում է համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները»*:

Պայմանավորված նորկորոնավիրուսային համավարակով՝ ԵՊՀ-ում դասապրոցեսը տեղափոխվել է առցանց տիրույթ: Այդ նպատակով կազմվել են նոր կարգեր և ուղեցույցներ, որոնցից են՝

- «Մագիստրոսական թեզի պաշտպանության ուսանողների ուղեցույց»,
- «ԵՊՀ մագիստրոսական թեզի պաշտպանության ղեկավարի, գրախոսի և ատեստավորող հանձնաժողովի անդամի ուղեցույց»,

- «Ավարտական աշխատանքի պաշտպանության ուսանողների ուղեցույց»,
- «Մանկավարժի որակավորման ատեստավորման ուղեցույց»:

Խնդիր 1.5-ով սահմանված է. «Ստեղծել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն»:

Հիմք ընդունելով ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 26.12.2019 թ. N 60 որոշումը՝ ստեղծվել է Լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Մշակել լեզուների ուսուցման նոր հայեցակարգը, Կենտրոնի կանոնադրությունը և ԵՊՀ այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցության մեխանիզմները»:*

Լեզուների ուսուցման նոր հայեցակարգը, Կենտրոնի կանոնադրությունը և ԵՊՀ այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցության մեխանիզմները վերջնական մշակման փուլում են:

Փոխհամագործակցության և փորձի փոխանակման նպատակով հանդիպում է տեղի ունեցել Միացյալ Թագավորության միջազգային կազմակերպության՝ Բրիտանական խորհրդի անգլերեն ծրագրերի ղեկավար Ադեհ Հովասափյանի հետ, քննարկվել են դասընթացների և քննությունների կազմակերպման մի շարք ծրագրեր:

Փոխհամագործակցության նպատակով միջազգային կապեր են հաստատվել որոշ երկրների (Հնդկաստան, Չինաստան) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ:

Դասընթացների կազմակերպման նպատակով Facebook սոցիալական ցանցում ստեղծվել է կենտրոնի պաշտոնական էջ:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել Կենտրոնի ծրագրային մեթոդական հենքը՝ լեզուների բազմամակարդակ ուսուցման համար»:*

Այս գործողության կատարումն ապահովելու նպատակով մշակվել են՝

- դասընթացների ծրագրեր՝ լեզվի իմացության համաեվրոպական սանդղակի (CEFR) բոլոր մակարդակներով (A1-C2).
- դպրոցական ծրագրերին համապատասխան դասընթացներ տարբեր տարիքային խմբերի երեխաների համար.

- լեզուների արագ յուրացման դասընթացների արդյունավետ ծրագրեր՝ ըստ ընդհանուր (General), խոսակցական (Spoken), գործարարության (Business), իրավաբանության (Law), զբոսաշրջության (Tourism) և այլ ոլորտների.
- մասնագիտական օտար լեզվի ուսուցման ծրագրեր (դիվանագետների, քաղաքագետների, իրավագետների և այլոց համար).
- միջազգային թեստերի (TOEFL iBT, IELTS, iTEP, TOEIC, GMAT, GRE, LSAT, SAT, ACT, TestDaf, TCF և այլն) փուլային նախապատրաստման դասընթացների ծրագրեր.
- բիզնես հաղորդակցության (Business Communication), հրապարակախոսական ոճի (Public Speaking) և ճարտասանական արվեստի (Rhetorics) ուսուցման ծրագրեր քաղաքագետների, իրավագետների, դիվանագետների և այլ անձանց համար, ինչպես նաև Employee Motivation, Interpersonal Skills, Team Building, Time Management, Decision Making, Building Self-confidence, Stress Management, Leadership Skills դասընթացների ծրագրեր:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Կազմակերպել օտար լեզուների դասընթացներ և հետագա թեստավորում (հավաստագրում)՝ ԵՊՀ և/կամ միջազգային վկայագրերի տրամադրմամբ»:

Հեռավար ուսուցման ձևով կազմակերպվել են TOEFL միջազգային թեստավորման նախապատրաստական դասընթացներ և քննություն:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Կազմակերպել հայոց լեզվի դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար՝ ԵՊՀ վկայագրերի տրամադրմամբ»:

Այս նպատակով հրավիրվել են հանրապետության առաջատար մասնագետներ, մշակվել է դասընթացի դյուրիին ծրագիր:

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին:

«Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի *Խնդիր 2.1*-ով սահմանված է. *«Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը»:*

Այս խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով»:*

ԵՊՀ-ում իրականացվող հետազոտական գործունեության գնահատումը կրում է պարբերական բնույթ՝ համաձայն ԵՊՀ-ում ներդրված և արդեն գործող գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշների, որոնք ամփոփված են «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 2.1 կետում: Ըստ նշված կարգի՝ գործում են պարբերականների դասակարգմամբ պայմանավորված չափանիշներ՝ հիմք ընդունելով պարբերականների՝ միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված լինելը:

2019/2020 ուստարում հրատարակվել է «Երևանի պետական համալսարանի գործունեության արդյունքային ցուցանիշները (2014-2019)» ձեռնարկը, որի նպատակը գործունեության տարբեր ոլորտներում ԵՊՀ կատարողականի ուսումնասիրումն ու գնահատումն է ընդունված ցուցանիշների լրակազմի միջոցով: Ձեռնարկը ներառում է նաև «Web of Science» շտեմարանում ԵՊՀ հրապարակումների մասին ամփոփ տեղեկատվություն: Ըստ այդմ՝ վերջին հինգ տարիների ընթացքում «Web of Science» շտեմարանում ինդեքսավորվել է ԵՊՀ աշխատակիցների 1382 հոդված, որոնք մեջբերվել են 6102 անգամ 5419 տարբեր հրապարակումներում:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար»:*

Ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար ԵՊՀ-ում գործում են համապատասխան մեխանիզմներ, որոնք անընդհատ վերանայվում և բարելավվում են: Ազդեցության գործակցով ամսագրերի ցանկը պարբերաբար հստակեցվում է ըստ Clarivate Analytics գրոծակալության ամենամյա Journal Citation Reports (JCR) զեկույցի:

Խնդրի 2.1-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը»:*

Ասպիրանտների մասնակցությունը գիտահետազոտական ծրագրերում խրախուսելու համար, համաձայն «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 2.1 կետի աղյուսակ 1-ի 11-րդ կետի, նախատեսված է լրավճար բոլոր այն ղեկավարների համար, ովքեր իրենց ասպիրանտներին կրնոգրկեն նշված ծրագրերում:

4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Խրախուսել ՈԻԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը»:*

Ուսանողական գիտական ընկերության գործառույթներից է ՈԻԳԸ ամենամյա գիտական նստաշրջանների անցկացումը: Ամեն տարի կազմակերպվող միջազգային գիտաժողովներում և գիտական նստաշրջանում հնչած զեկուցումներից լավագույնները ընտրվում և գրախոսվում են տպագրման համար: Հաշվետու 2019/2020 ուստարում, համաձայն «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» 3.1 կետի աղյուսակ 2-ի 9-րդ կետի, 13 գիտական ղեկավարի հատկացվել է լրավճար՝ յուրաքանչյուրին 15.000 ՀՀ դրամի չափով:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում»:*

Հիմք ընդունելով նշված գործողության իրականացման անհրաժեշտությունը՝ 2019/2020 ուստարվանից ԵՊՀ յոթ ֆակուլտետների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում փորձնական (պիլոտային) եղանակով ներդրվել է հետազոտական բաղադրիչը (ՀԲ), և սահմանվել է ՀԲ ներդրման կարգը,

որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը: Առաջին կիսամյակի ընթացքում փորձնական (պիլոտային) ծրագրի արդյունքները վերլուծելու նպատակով կատարվել է մշտադիտարկում, որը հնարավորություն է տվել վերհանելու այս գործընթացի թույլ և ուժեղ կողմերը և թերությունները, ինչի հիման վրա ընթացակարգը բարելավվել է, և մշակվել է «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը»: 2020/2021 ուստարվանից ՀԲ-ն պարտադիր ներառվել է բոլոր կրթական ծրագրերում:

Վերոհիշյալ կարգում հետազոտական աշխատանքը սահմանված է որպես մասնագիտական ոլորտին առնչվող, կիրառական նշանակություն ունեցող և գործնական խնդիրների լուծմանը միտված ինքնուրույն անհատական կամ խմբային հետազոտություն: Այն անմիջականորեն առնչվում է տվյալ մասնագիտական դասընթացի առարկային և խնդիրներին: Հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացների ցանկը սահմանում է ծրագրի ղեկավարը, և հաստատվում է ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից: Հաստատումից հետո այն ներառվում է համապատասխան կրթական ծրագրի մասնագրում: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում այդ դասընթացները նվազագույնը երկուսն են, իսկ առավելագույնը՝ վեցը: Հետազոտական աշխատանքը կատարվում է գիտական և հետազոտական ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել Start-Up լաբորատորիաներ՝ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով»:*

Այս խնդրով նախատեսված առնվազն հինգ Start-Up լաբորատորիաներից երեքը ստեղծվել են և գործում են Ֆիզիկատեխնիկական կետրոնի կազմում: 2019 թվականից գործում է Մանրեաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը: Հաշվետու ժամանակահատվածում պլանավորվել և համապատասխան գործընթացներ են սկսվել Ֆարմացիայի ինստիտուտի դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոն ստեղծելու ուղղությամբ: Erasmus-ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել ասպիրանտական կրթության հետազոտական լաբորատորիա՝ համապատասխան տեխնիկական սարքավորումներով:

Խնդիր 2.2-ով սահմանված է. «Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում»:

Հանրապետության տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների առաջատար գիտաշխատողներին որպես ԵՊՀ մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավար ներգրավելը կրում է կայուն շարունակական բնույթ: Հաշվետու ուստարում ևս ԵՊՀ բազմաթիվ մագիստրոսական թեզեր և թեկնածուական ատենախոսություններ ղեկավարել են հանրապետության տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների առաջատար գիտաշխատողներ: Այսպես՝ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում» մագիստրոսի կրթական ծրագրում որպես մագիստրոսական թեզի ղեկավար ներգրավված են «Մինոփսիս Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ), իսկ «Ռադիոֆիզիկա» կրթական ծրագրում՝ ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի առաջատար մասնագետներ: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսի կրթական ծրագրում ներգրավված են ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար մասնագետներ: ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման գործընթացում ներգրավված են գիտնականներ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների և փորձագիտական կենտրոնից (ՓԲԸ) և այլն:

2-րդ գործողությամբ նախատեսված է. «Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը»:

Գիտահետազոտական կենտրոնների և ԵՊՀ ստորաբաժանումների կողմից իրականացվում են համատեղ ծրագրեր տարբեր ոլորտներում: Այդ մասին է վկայում ՀՀ գիտության կոմիտեի (ԳԿ) կողմից հայտարարված թեմատիկ ֆինանսավորման մրցույթներում հաղթած ԵՊՀ թեմաներում այլ գիտահետազոտական կենտրոնների աշխատողների ընդգրկվածության աճը: Մասնավորապես, ԳԿ հայտարարած՝ գիտության

ուրրտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության մրցույթին համատեղ ներկայացվել են բազմաթիվ հայտեր:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը»:

Նշված գործողության իրագործման շրջանակում ԵՊՀ-ն հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է (շարունակում է համագործակցել) շուրջ 100 հիմնարկ-ձեռնարկությունների հետ: Համագործակցությունը ներառում է համատեղ կրթական և գիտական ծրագրերի իրականացում, ուսանողների կողմից կատարվող հետազոտությունների ղեկավարում, պրակտիկաների անցկացում, լաբորատորիաների ստեղծում ու շահագործում և այլն: Համատեղ հետազոտական և կրթական ծրագրեր կատարվում են նաև այլ պետական հաստատությունների հետ, ինչպես նաև ԵՊՀ-ի արտասահմանյան գործընկերների հետ, որոնցից են Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում ուսանողների փոխանակումները, պրակտիկայի կազմակերպումը:

ԵՊՀ-ն համագործակցում է նաև մասնավոր հատվածի հիմնարկների հետ, մասնավորապես՝ իրականացվում են համատեղ կրթական ծրագրեր «Մինոփսիս Արմենիա» ընկերության, ISTC կենտրոնի հետ: Համագործակցություն է ծավալվում նաև այլ ընկերությունների և կազմակերպությունների հետ, որոնցից են «Ֆիլիպ Մորիս Արմենիա»-ն, «Կոկա Կոլա»-ն, «Արփիմեդ» և «Լիկվոր» դեղարտադրող ընկերությունները, «Աստղիկ» և «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնները, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը, «ՍՕՍ մանկական գյուղեր» միջազգային հիմնադրամը, Առողջության և կրթության հայկական կենտրոնը, «World Vision» Մանկական զարգացման հիմնադրամը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, «Արենի-1 քարայր կոնստրուկցիոն»-ը, «Զորահ Վայնս», «Արենի», «Արմենիա Վայնս» գինեգործարանները և այլն:

Խնդիր 2.3-ով սահմանված է. «Խթանել Համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացումը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ»:

Այս առնչությամբ ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարներն իրենց հաշվետու զեկույցներում պարտադիր ներառում են միջազգայնացման (համատեղ ծրագրերի, հոդվածների, գիտաժողովների) վերաբերյալ տվյալներ:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում Համալսարանի աշխատողների հրապարակումները»:*

Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրապարակումները խրախուսվում են «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» համաձայն: Շարունակաբար հստակեցվում է միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված պարբերականների ցանկը ըստ «Web of Scinece» և «Scopus» շտեմարանների: Նշված շտեմարաններում հրապարակումների քանակը նախորդ ուստարվա համեմատ աճել է:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը»:*

ԵՊՀ օտարալեզու գիտական հանդեսների հրատարակման ուղղությամբ կատարվել են հետևողական աշխատանքներ: Ըստ այդմ՝ ԵՊՀ-ի կողմից հրատարակվող (այդ թվում՝ համատեղ հրատարակվող) ամսագրերը պետք է գրանցվեն «Crossref» համակարգում՝ համապատասխանելով նշված համակարգի բարեվարքության կանոններին: ԵՊՀ-ի կողմից հրատարակվող (այդ թվում՝ համատեղ հրատարակվող) ամսագրերի խմբագրական աշխատանքները (հոդվածների ընդունում, գրախոսության գործընթացի կազմակերպում, հոդվածների խմբագրում) կատարվելու են բացառապես էլեկտրոնային եղանակով OJS համակարգի (<http://journals.yzu.am>) միջոցով: Օրինակ, գործընթացը լավագույն ձևով իրականացնում է Proceedings of the YSU. Chemisty and Biology ամսագիրը, իսկ մյուս ամսագրերի համար վերջնաժամկետ է սահմանվել 2020 թ. դեկտեմբերի 31-ը: Անգլերեն տպագրվող ԵՊՀ ամսագրերը պետք է գրանցվեն (դիմեն գրանցման համար) Scopus և Web of Science շտեմարաններում:

Խնդրի *4-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությանը»:*

Շնորհիվ ներդրված «Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի»՝ ԵՊՀ-ն 2019/2020

ուստարում ևս կազմակերպել է միջազգային գիտաժողովներ, որոնց թիվը, նախորդ ուստարիների հետ համեմատած, նվազել է՝ պայմանավորված համավարակով:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը»:

Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության շարունակականության և խորացման մասին է վկայում այն փաստը, որ ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտը արտերկրի մի շարք համալսարանների հետ (մասնավորապես՝ Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան՝ ՌԴ, Գերմանիայի Ռոստոկի պետական համալսարան, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարան, Ա. Նեսմեյանովի անվան Էլեմենտորգանական միացությունների ինստիտուտ՝ ՌԴ) իրականացնում է հետազոտական և կրթական ծրագրեր: ԵՊՀ-ն համագործակցել է նաև Կովկասի բնության հիմնադրամի, FAST հիմնադրամի, Ռուսական գիտական հիմնադրամի, Հումբոլդտի համալսարանի հետ: Հաշվետու ուստարում ԵՊՀ-ում հիմնադրվել է Ամերիկագիտության կենտրոն. ծրագիրն իրականացվում է Արիզոնայի համալսարանի հետ համատեղ:

Միաժամանակ, իրականացվել են մի շարք գիտական ու կրթական փոխանակման ծրագրեր, որոնք միտված են եղել գիտական գործունեության խթանմանը, ինչպես նաև համագործակցային նոր հեռանկարների ուրվագծմանը: Մասնավորապես, ԵՊՀ աշխատողների և հետազոտողների մեծ խմբեր գործուղվել են առաջատար գիտական կենտրոններ, օրինակ՝ Մեքսիկայի Գվադալախարայի համալսարան, Փարիզի արվեստի պատմության ազգային ինստիտուտ, Գերմանիայի Յենայի և Սաարլանդի համալսարաններ, Ֆրանսիայի Ֆրենչ Կոնտե համալսարան, Չեխիայի Հրադեց Կրալովե համալսարան, Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ:

Խնդիր 2.4-ով սահմանված է. «Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զայցբուրգյան սկզբունքներին»:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը»:

Նշված ուղղությամբ Erasmus+ ծրագրի շրջանակներում իրականացվում է Armdoct նախագիծը, որը նպատակ ունի վերափոխելու դոկտորական կրթությունը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, տնտեսության պահանջներին ու ԵՄ փորձին համա-

պատասխան և Չալցբուրգյան սկզբունքները հաշվի առնելով: Տվյալ նախագծի նպատակն է ըստ գիտական կադրերի պատրաստման համակարգի բաղադրիչների ներկայացնել գործընթացները, ընդհանուր բնութագիրը, հիմնական դերակատարներին և նրանց գործառույթները, առկա խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր եղանակները և ուղիները:

4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր»:

ԵՊՀ-ն միջոցներ է ձեռնարկում ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր ստեղծելու ուղղությամբ՝ իր հնարավորությունների և պետական դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում պարբերաբար թարմացնելով լաբորատորիաները նոր սարքավորումներով, գրականությամբ և այլն: Մասնավորապես, մինչև տարեվերջ ասպիրանտների համար նախատեսվում է բացել 23.800 եվրոյի արժողության սարքերով հագեցած լսարան: Խնդրի ուղղությամբ Erasmus+ ծրագրի շրջանակներում իրականացվում է Modest նախագիծը, որի նպատակներից է դոկտորական ուսուցման կենտրոնի հիմնադրում, և այն ենթադրում է համապատասխան տեխնիկայով զինված լսարանի ստեղծում և կրթական գործընկեր համալսարանների հետ մշակված մոդուլների ներդրում:

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:

Հանրային ներգրավում և ծառայություններ» ռազմավարական նպատակի *Խնդիր 3.1*-ով սահմանված է. **«Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը»:**

Խնդիր 3.1-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ձարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը»:*

2019/2020 ուստարում շարունակվել է ԵՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների հետ աշխատանքը. լուսաբանվել են ԵՊՀ-ում կազմակերպված գրեթե բոլոր միջոցառումները:

ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ պարբերական աշխատանքը նպաստել է հանրային կապերի ոլորտում ներբուհական ցանցի արդյունավետության բարձրացմանը:

ԵՊՀ Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1120 նյութ՝ մոտ 1600-ով քիչ նախորդ տարվա համեմատ, իսկ «Հայտարարություններ» բաժնում՝ 188 հայտարարություն:

2019/2020 ուստարում շարունակվել են ԵՊՀ պորտալի զարգացման 26 ուղղությամբ տարվող աշխատանքները՝ համալսարանի ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն: ԵՊՀ պորտալում, որը ստեղծվել է 2006 թվականին, ընդգրկված են ավելի քան 100 կայք ու ենթակայք:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. **«Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները»:**

2019/2020 ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ կայքերը.

- Բակալավրի և մագիստրատուրայի ընդունելության առցանց գրանցման կայք (<https://admission.yasu.am/>),
- ԵՊՀ ինտերնետ շտեմարանի կայք (<http://wiki.yasu.am/>):

Գործարկվել է ԵՊՀ էլեկտրոնային փոստի Android համակարգի համար նախատեսված ծրագրային հավելվածը:

2019/2020 ուստարում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացվել են 1398 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Կայքում առկա է շուրջ 30.086 հրապարակում: Կայքի այցելուների թիվը նախորդ ուստարվա համեմատ աճել է՝ հասնելով օրական միջինը 17,966-ի (ըստ սերվերի ներքին վիճակագրական գործիքի): Թարմացվել են ֆակուլտետների պաշտոնական տեսահոլովակները, և «Youtube»-յան պաշտոնական ալիքում ավելացվել են 50-ից ավելի առցանց դասընթացների և ուղեցույցների մասին պատմող տեսանյութեր: Օպերատիվորեն կազմակերպվել է կարևոր տեղեկատվության տարածումը համալսարանական դասախոսների և ուսանողների էլեկտրոնային հասցեներին: Թարմացվել է «Առաջին կուրսեցու ուղեցույց» կայքի բովանդակությունը: Ամբողջությամբ փոփոխվել են «Դիմորդ» (<http://www.yasu.am/entrant>) կայքէջի «Բակալավրիատ», «Մագիստրատուրա», «Ասպիրանտուրա» ենթաբաժինների բովանդակությունները և կայքի արտաքին տեսքը: Թարմացվել են «ԵՊՀ կառուցվածք» (<http://www.yasu.am/ysu>), «ԵՊՀ մասնագիտական խորհուրդներ» (<http://councils.yasu.am>), «Գիտական հանդեսներ» (<http://publications.yasu.am>), «Որակի ապահովման կենտրոն» (<http://www.yasu.am/quality/>) և այլ կայքեր:

Ապահովվելով թափանցիկության սկզբունքը՝ շարունակական աշխատանք է իրականացվում «ԵՊՀ փաստաթղթեր» (<http://doc.yasu.am>) կայքի ուղղությամբ: Տեղադրվում են ոչ միայն ԵՊՀ կանոնադրությունները, կանոնակարգերը, ընթացակարգերը, ծրագրերը, հրամանները, հաշվետվությունները, ֆինանսական փաստաթղթերը, այլև ներկայացվում են կոլեգիալ մարմինների (ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ, ԵՊՀ գիտական խորհուրդ, ֆակուլտետների և բուհում գործող այլ ստորաբաժանումների գիտական խորհուրդներ) նիստերի արձանագրություններն ու որոշումները: Հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել են ֆինանսական հաշվետվություններն ու անկախ աուդիտի եզրակացությունները: Թարմացվել են «Կրթություն» կայքի առկա և հեռակա ուսուցման կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցները:

ԵՊՀ ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրվել են առկա ուսուցման համակարգի 2020/2021 ուսումնական տարվա դիմորդների շարժը՝ ըստ օրերի, այնու-

հետև՝ ԵՊՀ ընդունվածների ցուցակները: Տեղադրվել են նաև ԵՊՀ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների թեստերը և դրանց պատասխանները:

Խնդիր 3.1-ի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «*Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը*»:

Հաշվետու ուստարում ԵՊՀ կայքի «Հայտարարություններ» բաժնում տեղադրվել են ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին վերաբերող հայտարարություններ:

Մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու «Facebook» սոցիալական ցանցով և ԵՊՀ պորտալի «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացված նամակները. ստացվել է ավելի քան 1960 հարց, որից 1709-ին տրվել են սպառիչ պատասխաններ:

ԵՊՀ կայքում հրապարակված նորությունները տեղադրվել են համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում (<http://www.facebook.com/ysu.am>), որի հետևորդների թիվը հասել է 56.638-ի:

Հանրային հետաքրքրության արժանացած միջոցառումները պատրաստի նյութերի և լուսանկարների տեսքով (96 հաղորդագրություն) ուղարկվել են հայաստանյան ԶԼՄ-ներին՝ լուսաբանելու նպատակով:

Իրականացվել է հայաստանյան տպագիր և ինտերնետային ԶԼՄ-ներում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Հաշվետու ուստարում տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 738 նյութ, իսկ ինտերնետային կայքերում՝ 4129:

Խնդիր 3.1-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «*Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել Համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները*»:

Սոցիալական պատասխանատվության շրջանակներում ԵՊՀ-ն իրականացրել է մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝ 2020 թվականին Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է նոր կորոնավիրուսի համավարակի կանխարգելման աշխատանքներին:

Խնդիր 3.1-ի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «*Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը*»:

Ներքին կորպորատիվ հաղորդակցության բարձր մակարդակի ապահովմանը նպաստել են՝

- ԵՊՀ ֆեյսբուքյան պաշտոնական էջը (<http://www.facebook.com/ysu.am>),
- ԵՊՀ wiki հարթակը (<http://.ysu.am/>),
- ԵՊՀ էլեկտրոնային փոստի համակարգը (<https://www.ysu.am/webmail>),
- էլեկտրոնային ներքին փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգը (<https://mul.ysu.am/am/>),
- «ԵՊՀ փաստաթղթեր» կայքը (<http://doc.ysu.am>):

Խնդրի *8-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակաուղղել հանրային ծառայությունների մատուցմանը»:*

Ինչպես նախկինում, 2020 թ. ևս ԵՊՀ հրատարակչության հրատարակած գրքերից նվիրատվության կարգով պարբերաբար տրամադրվել են մայրաքաղաքի և մարզերի քաղաքային ու բուհական գրադարաններին: Համալսարանում իրականացված միջոցառումներին (օլիմպիադաներ, միջազգային մրցույթներ, գիտաժողովներ և այլն) մասնակցած ուսանողներին, ԵՊՀ հյուրերին նվիրվել են վերջին տարիներին հրատարակված արժեքավոր գրքերից: Հանրապետական և միջազգային ցուցադրությունների և տոնավաճառների ընթացքում նույնպես ԵՊՀ հրատարակչության հրատարակած մասնագիտական գրականությունից որոշակի քանակությամբ տրամադրվել է համապատասխան ոլորտով հետաքրքրված անձանց:

Խնդիր 3.2-ով սահմանված է. «Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը»:

Խնդրի իրագործման համար *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և պարբերաբար իրականացնել շուկայում առկա կրթական ծրագրերի մշտադիտարկում»:*

Աշխատաշուկայում և կրթաշուկայում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկն ուսումնասիրելու նպատակով կատարվել է հիմնականում փաստաթղթային վերլուծություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, խոշոր գործատուների և նրանց պատվերով տարբեր հաստատությունների կողմից իրականացված

բազմաթիվ հետազոտությունների հիման վրա: Ուսումնասիրություն է իրականացվել նաև քանակական մեթոդով՝ ԵՊՀ-ում սովորող հանրային ծառայողներին հարցումների գործընթացում ներգրավելու միջոցով: Նշված հետազոտությունները բացահայտում են լրացուցիչ կրթության առանձնահատուկ դերակատարումը աշխատաշուկա-բուհ հարաբերություններում:

Աշխատաշուկայում մասնագետներին ներկայացվող պահանջների փոփոխությունները, լրացուցիչ կրթական ծրագրերի որակի ապահովումը և հաստատությունների մրցակցությունն անհրաժեշտ են դարձնում ԵՊՀ-ում գործող լրացուցիչ կրթական ծրագրերի մշտադիտարկումը: Ռազմավարական ծրագրի պահանջներին համապատասխան իրականացված մշտադիտարկման արդյունքում ամբողջությամբ կամ մասնակիորեն լրամշակվել են վարչության լրացուցիչ կրթական ծրագրերը՝ և՛ բովանդակային, և՛ կադրային ապահովման առումով: Ուսումնասիրության և մշտադիտարկման արդյունքները ներկայացված են հաշվետվության ձևով [/http://extension.yasu.am/](http://extension.yasu.am/):

2019/2020 ուստարում, պայմանավորված համավարակով, նոր ուսումնասիրություններ չեն կատարվել:

Նույն խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը»:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և իրականացվել են մի շարք նոր ծրագրեր:

Հ/հ	Ծրագրերի անվանումներ	Պատվիրատուներ
1.	Կառավարչական հմտություններ և պետական ծառայություն	ՀՀ ԱԺ աշխատակազմ
2.	Զինվորական հոգեբանություն (զինծառայողների համար)	ՀՀ ՊՆ աշխատակազմ
3.	ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները (քաղծառայողների համար)	
4.	Մրցույթի հարցազրույցի փուլը վարելու համար հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ (ՀՀ քաղծառայողների համար)	ՀՀ վարչապետի աշխատակազմ
5.	Խնդրի լուծում (ՀՀ քաղծառայողների համար)	
6.	Հաշվետվությունների մշակում (ՀՀ քաղծառայողների համար)	
7.	ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած, ինչպես նաև երկարաժամկետ իմիգրանտների համար քաղաքացիական կողմնորոշում (սիրիահայ փախստականների համար)	ՀՀ միգրացիոն ծառայություն
8.	Ընդհանուր քիմիա	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ աշխատողների համար

IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

«Որակյալ մարդկային ռեսուրսներ» նպատակի *Խնդիր 4.1*-ով սահմանված է. «Ձարգացնել դասախոսական կազմի ներուժը»:

Խնդրի իրագործմանն ուղղված *3-րդ գործողությամբ* նախատեսված է. «Մահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների»:

Այս ուղղությամբ գործընթացներն սկսվել են 2016 թվականից և ունեն շարունակական բնույթ:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա ԵՊՀ-ն, որպես բարելավման գործողություն, նախատեսել էր կրթական ծրագրերի (ԿԾ) մասնագրերում սահմանել դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր (այդ թվում՝ մանկավարժական) և մասնագիտական պահանջներ՝ ծրագրի նպատակին և կրթական վերջնարդյունքներին համապատասխան: Բարելավման գործողությունը մեկնարկել է 2019/2020 ուստարում. սկսվել է ԵՊՀ ԿԾ-ների մասնագրերում դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջներ սահմանելու վերաբերյալ փորձնական (պիլոտային) ծրագիրը: Վերջինիս մասնակցել են տասը ֆակուլտետ և մեկ գիտակրթական կենտրոն՝ ընդհանուր առմամբ 16 կրթական ծրագրով: Արդյունքում յուրաքանչյուր ԿԾ իրականացնող դասախոսների համար սահմանվել են ընդհանրական (փոխանցելի) և մասնագիտական կարողությունները:

Ընդհանուր և մասնագիտական պահանջների սահմանումը լուծում է երկու խնդիր.

1. դասախոսի հստակ պրոֆեսսիոգրամմայի մշակման հիման վրա համապատասխան որակյալ ռեսուրսի հավաքագրման գործընթացի բարելավում,

2. դասախոսների որակավորման բարձրացման (ԴՈԲ) ծրագրերն ուղղորդելու և հասցեական դարձնելու միջոցով դասախոսական կազմին իսկապես անհրաժեշտ և ՄԿԾ վերջնարդյունքին հանգեցնող մասնագիտական և ընդհանրական կարողությունների զարգացում:

2020/2021 ուստարվա երկրորդ կիսամյակից նախատեսվում է ԵՊՀ բոլոր ԿԾ-ների համար սահմանել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և

մասնագիտական պահանջներ: Դրանք պետք է հաշվի առնվեն նոր ուսումնական տարվա համար նախատեսված ուսումնական բեռնվածության բաշխման գործընթացում:

Նշված խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը»:

ԵՊՀ-ում ԿԾ-ների կադրային ապահովվածության կայունությունը երաշխավորող ընթացակարգերից է «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը» փաստաթուղթը, որը պարբերաբար վերանայվում և բարելավվում է (նոր խմբագրությամբ հաստատվել է ԵՊՀ ԳԽ նիստում 12.03.2020 թ.), և որի հիման վրա ձևավորվում է դասախոսի մեկ ուսումնական տարվա անհատական բեռնվածությունը: Վերջին փոփոխություններով փաստաթղթում արտացոլված է «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի» համաձայն դասախոսներին տրվող լրացուցիչ ժամաքանակի, մագիստրատուրայում պրակտիկայի իրականացման համար մագիստրոսական թեզի դեկավարին հատկացվող ժամաքանակի սահմանում: Ուժը կորցրած է ճանաչվել դոցենտի պաշտոնը զբաղեցնելու համար մինչ այդ առկա սահմանափակումը. անհրաժեշտ դասախոսությունների համար սահմանված ժամաքանակը փոխարինվել է լսարանային ժամերով, ինչը լեզուների ամբիոնների դասախոսներին ևս հնարավորություն տվեց հավակնել դոցենտի պաշտոնին՝ համապատասխան կոչումը ստանալու պարագայում: Տվյալ գործողությամբ հավասար պայմաններ սահմանվեցին ԵՊՀ բոլոր դասախոսների մասնագիտական աճի համար: Կատարվել են նաև մի շարք այլ փոփոխություններ, որոնք արտացոլված են Երևանի պետական համալսարանի դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը հաստատող փաստաթղթում:

Խնդիր 4.2-ով սահմանված է. «Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ»:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և ներդնել վարչական, ուսումնասօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ»:

2019 թ. դեկտեմբերին Ուսումնամեթոդական վարչության և ՏՏ կենտրոնի համատեղ ջանքերով իրականացվել է ֆակուլտետների (կենտրոնների, ինստիտուտների) դեկանատների և ամբիոնների աշխատողների վերապատրաստում՝ կապված ուսումնական գործընթացի կազմակերպման, օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի փաստաթղթերի վերանայման, քննարկման, Supervision ծրագրի կիրառման վերաբերյալ հարցերի պարզաբանման հետ:

Քննարկվել են նաև ուսումնական պլանների կառուցվածքների նորացման, պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության նորմերի փոփոխության, ինչպես նաև դրանցով պայմանավորված ուսումնական բեռնվածություններին առնչվող հարցեր:

2019/2020 ուստարվա 2-րդ կիսամյակում նախատեսված վերապատրաստումը չի իրականացվել՝ Covid-19 համավարակի պատճառով:

Խնդիր 4.3-ով սահմանված է. «Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը»:*

Դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը՝ «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», մշակվել և հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. մայիսի 26-ի թիվ 7/2 որոշմամբ և գործում է արդյունավետորեն: Նշված կարգում վերջին փոփոխությունն արվել է 2020 թ. մայիսի 26-ին՝ ԵՊՀ ԳԽ թիվ 13/1 որոշմամբ:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Մշակել վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ»:* Հաշվետու ժամանակահատվածում վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ չեն մշակվել:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության»:*

Համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից նախագիծ է ուղարկվել ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ՝ դասախոսների աշխատավարձը 10 %-ով բարձրացնելու վերաբերյալ, սակայն արտակարգ իրավիճակի, այնուհետև ռազմական դրության պայմաններում Հոգաբարձուների խորհրդի նիստերը չեն կայացել:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր»:

Դեռևս նախորդ տարիներին ԵՊՀ-ն ներդրել է բժշկական ապահովագրության փաթեթը, ԵՊՀ աշխատողների երեխաների ուսման վարձերի զեղչերի, հաշմանդամություն ունեցող աշխատողների հավելավճարների համակարգերը: 2019 թ. սեպտեմբերից շահագործման հանձնված ԵՊՀ ուսանողական հանրակացարանում անվճար կեցության ծառայություն է մատուցվում Ապրիլյան քառօրյա մարտերին մասնակից ԵՊՀ ուսանողներին, իսկ մարտերին մասնակից այլ բուհերի ուսանողներին տրամադրվում է կեցության ծառայության 30 % զեղչ:

5-րդ գործողությամբ նախատեսված է. «Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզատողջարանային բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը բոլոր աշխատողների և սովորողների համար»:

ԵՊՀ տարածքում գործող հասարակական սննդի օբյեկտներում, գնագոյացման քաղաքականության և սննդի որակի հսկողության հետ կապված, իրականացվում են մշտադիտարկումներ: Ուսումնասիրվում են Ծաղկաձորի ուսումնասարտադրական բազայում ԵՊՀ աշխատողների, նրանց ընտանիքի անդամների, ուսանողների համար հանգստի կազմակերպման մատչելիությանը վերաբերող հարցեր: Ծաղկաձորի ուսումնասարտադրական բազայում սննդի կազմակերպումը կատարվում է մասնագիտացված ընկերության կողմից: Համալսարանական բազաներում կատարվում են վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ (բյուջեով նախատեսված):

V. ՈՐԱԿՑԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

«Որակյալ ենթակառուցվածքներ» ռազմավարական նպատակի *Խնդիր 5.1*-ով սահմանված է. **«Ձարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները»:**

Խնդիր 5.1-ի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները»:*

Հաշվետու ուստարում շարունակվել են ԵՊՀ ուսումնական լաբորատորիաների և լսարանների վերազինման և համակարգչային գույքով ապահովման աշխատանքները: Մասնավորապես, նոր սերնդի 16 համակարգիչներով հագեցվել է Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեկ լսարան, պրոյեկտորներով համալրվել են Ֆիզիկայի ֆակուլտետի երկու լսարան: Հաշվետու ուստարում նոր, ժամանակակից և բավական որակյալ ակուստիկ համակարգով համալրվել է ԵՊՀ Մեծ դահլիճի: Վերազինվել և կատարելագործվել է նաև Մշակույթի կենտրոնի ակուստիկ համակարգը:

Խնդիր 5.1-ի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Վերանորոգել և արդիականացնել գիտական լաբորատորիաները»:*

ԵՊՀ-ում հետևողականորեն իրականացվում են գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազային արդիականացման գործընթացներ: 2019/2020 ուստարում ԵՊՀ երեք լաբորատորիա վերազինվել է 45.4 մլն ՀՀ դրամ արժողության լաբորատոր սարքավորումներով: Մասնավորապես, ձեռք են բերվել լույսի տարածման մոդուլատոր (12 մլն ՀՀ դրամ արժողության) սեկտոմետր-բարակ թափանցիկ թաղանթների հաստությունների չափման համակարգ (18 մլն ՀՀ դրամ արժողության): Հետազոտական մեծ նշանակություն ունի նաև anton Paar Listesizer 500 (Particle size analyzer) սարքավորումը, որի ձեռքբերման հնարավորությունը ԵՊՀ-ն շահել է հաշվետու ուստարում անցկացված մրցույթում:

Վերոնշյալ խնդրի *7-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ»:*

Այս ուղղությամբ ԵՊՀ մասնաշենքերում կատարվել են տանիքների, աշխատասենյակների, միջանցքների, նկուղային հարկերի, լսարանների, լաբորատորիաների, սանհանգույցների մասնակի կամ ամբողջական վերանորոգման աշխատանքներ: Մասնավորապես, վերանորոգվել են ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի 6-րդ հարկում գտնվող Մշակույթի ու Շրջանավարտների և կարիերայի կենտրոնները:

ԵՊՀ թիվ 1-2 մասնաշենքերում վերանորոգվել են 11 լսարան, աշխատասենյակ և լաբորատորիա, ինչպես նաև Դատական նիստերի դահլիճը և Իրավաբանական կլինիկայի լաբորատորիան:

Թիվ 3-4 մասնաշենքում վերանորոգվել են Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանատը և միջանցքը, 1-ին և 2-րդ հարկերի բոլոր լսարանները, 3-րդ հարկի երկու լսարան, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի վեց, Ռեզիդենցիայի ֆակուլտետի տասը լսարան, Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանատը, ֆակուլտետի բակի կողմից նկուղ իջնող մուտքը, փոխվել են մի շարք լսարանների պատուհանները, դռները, նորոգվել են աշխատասենյակներ, Սոցիոլոգիայի ֆակուլտետի միջանցքի հատակը:

Թիվ 5 մասնաշենքում իրականացվել է հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող անձանց համար թեքահարթակի կառուցում, ինչպես նաև՝ մի շարք լաբորատորիաների, լսարանների, աշխատասենյակների, սանհանգույցների, միջանցքների մասնակի կամ ամբողջական նորոգում, լուսավորման համակարգերի մասնակի փոխարինում:

Թիվ 6 մասնաշենքում կատարվել են թեքահարթակի կառուցման, օդափոխության համակարգի փոխարինման, դահլիճի, միջանցքների, աստիճանավանդակների, մուտքի դռան, Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության բոլոր սենյակների նորոգման աշխատանքներ:

Թիվ 7 մասնաշենքում կառուցվել է թեքահարթակ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետում կառուցվել է հեռուստաստուդիա, իսկ դեկանատում և ութ սենյակներում իրականացվել են մասնակի կամ ամբողջական վերանորոգման աշխատանքներ:

Թիվ 8 մասնաշենքում կառուցվել է թեքահարթակ, կատարվել է մասնաշենքի մասնակի վերանորոգում, մոտ երեք տասնյակ սենյակների, դահլիճի և միջանցքների, մուտքի հենապատի, հակահրդեհային մուտքի տանիքի նորոգում, մասնաշենքի տանիքի մասնակի վերանորոգում:

ԵՊՀ Կիևյան 1ա մասնաշենքում իրականացվել է տարածքի ասֆալտապատում, դիտահորերի վերանորոգում: Ալեք Մանուկյան 1 հասցեում կատարվել են ԵՊՀ հարակից կանաչապատ տարածքի ոռոգման ջրագծի մոնտաժման աշխատանքներ:

Խնդիր 5.2- ով սահմանված է. ***«Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները»:***

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը»:*

Կայքերի և ներքին համակարգերի արագագործությունը և բովանդակության ապահովվածությունը բարձրացնելու, ինչպես նաև նոր համակարգերի աշխատանքը ապահովելու համար ընթացիկ տարում տեղադրվել են երկու նոր ժամանակակից սերվեր, ինչը հնարավորություն տվեց գործարկել հեռաուսուցումը:

Վերոնշյալ խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել ներքին տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության մակարդակը»:*

Հաշվետու ուստարում շարունակվել են ԵՊՀ ներքին SS համակերպերի և ցանցի պաշտպանվածությունն ապահովելու և ավելի բարձր մակարդակի հասցնելու աշխատանքները: Մասնավորապես, ԵՊՀ կայքերի սերտիֆիկատները թարմացվել են երկու տարի ժամկետով:

ԵՊՀ մի շարք մասնաշենքերում, այդ թվում՝ Կենտրոնական մասնաշենքից մինչև Աբովյան 52 հասցեում գտնվող ԵՊՀ 6-րդ և 8-րդ մասնաշենքերը, 100Մբ/վ կապուղին փոխարինվել է 1000Մբ/վ կապուղով:

Բացի գոյություն ունեցող տվյալների պահեստավորող սերվերներից (backup storage)՝ տեղադրվել է նոր պահուստավորման համակարգ, որը ֆիզիկապես գտնվում է հիմնական սերվերային սենյակից դուրս: Այն հնարավորություն կտա ֆորսմաժորային իրավիճակի դեպքում վերականգնել տվյալները՝ ունենալով առավելագույնը մի քանի օրվա տվյալների կորուստ:

Ձեռք է բերվել 2-րդ ինտերնետային կապուղին, որը հնարավորություն է տալիս ներքին ցանցից ինտերնետի հասանելիության անընդհատություն կապուղներից մեկի հետ առաջացած խնդիրների դեպքում:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը, ապահովել գրադարանի էլեկտրոնային քարտարանի ամբողջական ձևավորումն ու շահագործումը»:*

Հաշվետու ուստարում մուտքագրվել է ավելի քան 52200 միավոր գրականություն: Թվայնացվել և օգտվողների համար կայքէջում տեղադրվել է 554 գիրք:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել Համալսարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին»:*

Աշխարհում ծավալված նորկորոնավիրուսային համավարակի և դրա հետևանքով ռեսուրսների օգտագործման սակավ հնարավորության պատճառով ԵՊՀ-ի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին հաշվետու տարում էականորեն պակասել է:

Խնդրի 9-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը»:*

Նշված ժամանակահատվածում գրադարանը համալրվել է 22784 միավոր (2897 անուն) գրականությամբ:

Խնդրի 10-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը, ընդլայնել ընթերցասրահների և համակարգչային սրահների աշխատաժամերը»:*

Ընթերցասրահներից մեկի վերանորոգման արդյունքում կտրուկ ավելացել է գրադարան այցելողների և օգտվողների թիվը: Խմբերով քննարկումների համար նախատեսված հատվածները (վերանորոգված ընթերցասրահում) ևս մեծ պահանջարկ ունեն օգտվողների շրջանում: Վերանորոգված ընթերցասրահի պայմանները (օդափոխություն, ջեռուցում, լուսավորություն և այլն) ապահովում են բոլոր հնարավորությունները ընթերցողների համար:

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

«Որակյալ ծառայություններ» ռազմավարական նպատակի *Խնդիր 6.1*-ով սահմանված է. «*Ձարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով*»:

Խնդրի *2-րդ գործողությամբ* նախատեսված է. «*Ձարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները*»:

Այս նպատակով Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից ուսանող-գործատու ձևաչափով կազմակերպվել են մի շարք տեղեկատվական հանդիպումներ (մասնավորապես՝ «Դասավանդի՛ր, Հայաստան», «Մաջորել Արմենիա» և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ), թեմատիկ սեմինար-դասընթացներ («Կյանքի հմտություններ», «Ներկայացման հմտություններ», «Գաղափարից՝ բիզնես պլան», «Հայկական ռեստորանային բիզնեսի տարածված սխալները», «Տուրիզմի ոլորտի կարևորությունը և աշխատանքային հեռանկարները ՀՀ-ում» և այլ թեմաներով), այցելություններ կազմակերպություններ: Հաշվետու ժամանակաշրջանում 390 համալսարանական մասնակցել է տարաբնույթ սեմինար-դասընթացների:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կողմից իրականացվող «Մշակութային դաստիարակություն» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են արվեստի տարբեր տեսակների վերաբերյալ դասախոսություններ, հանդիպում-քննարկումներ և վարպետության դասեր հայտնի մասնագետների հետ:

ԵՊՀ ռուսական կենտրոնում, բացի անհատական ռուսաց լեզվի պարապմունքներից, կազմակերպվել են ռուսաց լեզվի ամենամյա ամառային դասընթացներ 6-10 տարեկան երեխաների համար: Իսկ 2019 թ. «Կարիտաս» բարեգործական կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում կազմակերպվել են եռամսյա դասընթացներ սիրիահայերի համար: Կենտրոնում, ռուսաց լեզվի տարածմանն ուղղված, իրականացվել են նաև քննարկումներ, կինոդիտումներ, բաց դասեր, գրական երեկոներ և ժողովներ: Բոլոր միջոցառումների նպատակն է օգնել ԵՊՀ ուսանողներին հաղթահարել լեզվական բարդույթը, ծանոթանալ ռուսական մշակույթին և ստեղծել իրենց համար բնական լեզվական մթնոլորտ՝ ռուսերեն խոսելու և բանավիճելու համար:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները»:*

2019/2020 ուստարում ԵՊՀ մշակույթի կենտրոնի «ՆԻԿԵ» կամավորական ջոկատի անդամները մասնակցել են համալսարանի կողմից կազմակերպված և մի շարք այլ հանրապետական միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին, որոնց թվում են Համահայկական 7-րդ խաղերը, ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված հանրապետական միջբուհական մրցաշարի փակման արարողությունը և այլն: «Կինոակումբի» գործունեության շրջանակներում «Շարմ Հոլդինգի» հետ համատեղ համալսարանականների համար կազմակերպել է «Քեզ հաղթանակ կնվիրեմ» ֆիլմի պրեմիերան ԵՊՀ-ում, իսկ ցուցադրությունից անմիջապես հետո տեղի է ունեցել քննարկում հեղինակի և դերասանական կազմի հետ:

Խնդիր 6.1-ի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը»:*

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը նոր գործնական կապեր է ստեղծել բազմաթիվ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: Համագործակցության հուշագիր է կնքվել «Գալուստ Գյուլպենկյան» հիմնադրամի հետ, որի համաձայն շուրջ 40 սփյուռքահայ երիտասարդ մասնագետներ պետք է մասնակցեին թեմատիկ տարբեր սեմինար-դասընթացների, բայց համավարակի հետևանքով ծրագիրը հետաձգվեց: Իրականացումը նախատեսվում է 2021 թ.:

Հաշվետու ուստարում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը իրականացրել է «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» կրթաթոշակային ծրագիրը: Ծրագրի շրջանակում փոխհատուցվել են ԵՊՀ 3 ֆակուլտետի 16 ուսանողի 2 տարվա մագիստրատուրայի ուսուցման ամբողջական վարձավճարները: Աշխատանքային թափուր հաստիքների 200 դիմում-հայտի համար կենտրոնի կողմից հավաքագրված 715 դիմորդներից 8-ը ընդունվել են աշխատանքի: Ուսումնական տարվա ընթացքում կենտրոնի միջոցով 21 կազմակերպությունում («Ամերիաբանկ» ՓԲԸ, «ՓԻԷԼԻՔՍ» ՍՊԸ, «Ինեկորբանկ»

ՓԲԸ, «ՎիվաՍԵԼ-ՄՏՄ» ՓԲԸ, «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ և այլն) ԵՊՀ 8 ուսանող մասնակցել է ինտերնշիփ ծրագրերի:

8-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները»:

ԵՊՀ-ում պարբերաբար վերանայվում է ուսանողների սոցիալական ինտեգրմանը նպաստող և նրանց սոցիալական ներգրավվածությունը ապահովող քաղաքականությունը: Այսպիսի մի նախաձեռնության, որը վերաբերում էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների սոցիալականացմանը և սոցիալական ինտեգրմանը, սկիզբ դրվեց 2019 թ.:

Երևանի պետական համալսարանի՝ լսողական, տեսողական կամ հենաշարժողական համակարգի խանգարումներ ունեցող ուսանողներին աջակցելու նպատակով 2019 թ. հոկտեմբերի 10-ին ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից ստորագրվել է «Հաշմանդամություն ունեցող ուսանողներին աջակցելու մասին» թիվ 187/20 հրամանը, որի դրույթները սահմանում են ֆակուլտետներում աջակցող օղակի առկայության անհրաժեշտությունը, ընդ որում՝ սոցիալական ինտեգրման գործառույթ կատարող աջակիցը կարող է լինել ինչպես դասախոսը, այնպես էլ ուսանողը: Մասնավորապես, տվյալ նախաձեռնությամբ սահմանված է հետևյալը.

ա) Լսողական, տեսողական և հենաշարժողական համակարգի խանգարումներ ունեցող ԵՊՀ հաշմանդամ ուսանողների դասապատրաստմանն օժանդակելու և համալսարանի տարածքում նրանց ուղեկցելու նպատակով տվյալ ֆակուլտետի աշխատողներին ժամավճարային հիմունքներով վարձատրություն է նշանակվում:

գ) Հենաշարժողական համակարգի խանգարումներ ունեցող ուսանողներին աջակցելու աշխատանքները կատարող ուսանողներին տրամադրվում է ԵՊՀ ռեկտորի սահմանած չափով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում:

10-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները»:

2019/2020 ուստարում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը համակարգել է «Կրթություն և կարիերա 2020» ամենամյա ցուցահանդեսին համալսարանի

մասնակցության կազմակերպչական աշխատանքները, որը կորոնավիրուսային համավարակի պատճառով հետաձգվեց անորոշ ժամանակով:

2019 թ. հոկտեմբերին փոխըմբռնման հուշագիր է կնքվել «Էյ Ընդ Էմ Ռեյթր» ՄՊԸ-ի հետ, որի համաձայն՝ երկու կառույցները շարունակելու են ակտիվ համագործակցել մանրէաբանական, կենսաքիմիական և կենսատեխնոլոգիական հետազոտությունների շուրջ: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ներգրավված է նաև Կենսաբանության համաշխարհային օլիմպիադայի կազմակերպչական աշխատանքներում:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ մի խումբ շրջանավարտներ ներգրավված են եղել ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների աշխատանքներին, մասնավորապես՝ ԵՊՀ-ին նվիրված 6 երգերի տեսահոլովակների նկարահանումներին, ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությանը, ԵՊՀ 100-ամյակի միջոցառումների մասին «Իրազեկող ավտոբուս» ծրագրին, Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցած հոբելյանական համերգին, Տ. Չուխաջյանի «Կարինե» օպերետի ներկայացմանը: Ստեղծագործող շրջանավարտներից շատերը մասնակցել են «ԵՊՀ-100» դասախոսների և ուսանողների համատեղ ցուցահանդեսին և այլ տարաբնույթ աջակցության նախաձեռնություններին:

Խնդիր 6.2-ով սահմանված է. «Զարգացնել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը»:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ»:

Ուսանողական խորհուրդը առաջին կուրսեցիների համար անցկացրել է «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում» խորագրով ամենամյա երկփուլ սեմինար-դասընթաց, որի նպատակը ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի վերաբերյալ համընդհանուր գիտելիքներ տալն էր: Ծրագրին մասնակցել է շուրջ 250 առաջին կուրսեցի: Ուսանողական գիտական ընկերության մի շարք համագործակցությունների արդյունքում կազմակերպվել են դասախոսություններ, դասընթացներ և սեմինար-քննարկումներ հետևյալ թեմաներով՝ «Մտավոր սեփականության իրավունքի խախտումները.

մարտահրավերներ և արձագանք» (բանախոս՝ ԱՄՆ ֆեդերալ կառավարության իրավաբան Վ. Վարդանյան), «Արժեթղթերի շուկա», «Կրիպտոարժույթներ» դասընթացների շարք (մի քանի բանախոսներ), «Բլոկչեյնը և նրա կիրառությունները» (Nooor բլոկչեյնի հայկական ասոցիացիայի հետ), «Տվյալների կառուցվածքներ» թեմայով դասընթացաշար և այլն: ՈւԳԸ ջանքերով ձևավորվել է «Սպորտային ծրագրավորման ակումբ», որի նպատակը օլիմպիադաների և մրցույթների մասնակցող ուսանողների համար պատշաճ գիտելիքների ապահովումն է:

Հաշվետու ուստարում ՈւԳԸ-ն կազմակերպել է մասնագիտական ճամբար Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողների համար, «WinterCamp» խորագրով մասնագիտական աշխատաժողով Սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների համար և «Հայկյան իրավակարգ 2050» խորագրով երկօրյա աշխատաժողով Իրավագիտության ֆակուլտետի ուսանողների համար:

Խնդիր 6.2-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Խթանել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը»:

Հաշվետու ուստարում ԵՊՀ ՈւԳԸ և ՀՀ Կենտրոնական բանկի Դիվիզանի ուսումնահետազոտական կենտրոնի համագործակցության շրջանակներում առցանց կազմակերպվել է «ՀՀ կենտրոնական բանկի անկախությունը որպես ՀՀ Սահմանադրության կարևոր նորմ» խորագրով սեմինար-քննարկում:

Ուսանողական գիտական ընկերության մի շարք միջազգային համագործակցությունների արդյունքում բացառիկ դասախոսություններ են կազմակերպվել Ամերիկայի կաթոլիկ համալսարանի (Վաշինգտոն, ԱՄՆ) պրոֆեսոր Ռոբին Դարլինգ Յանգի բանախոսությամբ, Սինգապուրի չինական համալսարանի փոխտնօրեն Վահագն Վարդանյանի բանախոսությամբ («Սինգապուրյան հրաշք» թեմայով): Ուշագրավ են նաև այլ թեմաներով անցկացված մի շարք դասախոսություններ, որոնցից են՝ «How to detect a habitable exoplanet?» (համագործակցություն «Yerevan Young Minds»-ի հետ, բանախոս՝ Վլադիմիր Հայրապետյան (NASA)), «Միջմոդային չորս ակիբների խառնումը սիլիցիումում՝ միջին ինֆրակարմիր տիրույթի հերալդավորված միակ ֆոտոնի համար» (համագործակցություն «OSA Student Chapter of YSU»-ի հետ, բանախոս՝ Տորոնտոյի համալսարանի գիտաշխատող Ստեֆանո Սինյորինի): Այդ դասախոսություններին մասնակցել է արտասահմանյան բուհերում սովորող շուրջ 30 ուսանող:

ՈւԳԸ գործուն աջակցության արդյունքում ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ պետական բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումները: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողները մասնակցել են հանրապետական տարբեր գիտաժողովների, հանրապետական և համահամալսարանական մրցույթների, օլիմպիադաների և փառատոնների:

Խնդիր 6.2-ի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈւԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը»:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության գիտական խորհրդի անդամները (ղեկավար մարմին, ՈւԳԸ ստորաբաժանումների նախագահներ) պետք է տիրապետեն քանակական և որակական հետազոտություններ անցկացնելու հիմնական սկզբունքներին և համակարգչային ծրագրերին, շուրջ 30 ուսանողի համար կազմակերպվել է «IBM SPSS» (Վիճակագրական փաթեթ սոցիալական գիտությունների համար) համակարգչային վիճակագրական ծրագրի երկամսյա դասընթացաշարը:

ՈւԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունի նաև գիտական աշխատանք կատարելու հմտությունների ուսուցման ամենամյա ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են գիտական հոդված գրելու, դաշտային հետազոտություն իրականացնելու սկզբունքներին և մեթոդաբանական-տեսական ուսումնասիրություններ կատարելու հմտություններին:

Ուշագրավ են նաև Ուսանողական գիտական ընկերության և Հայաստանի պատմության թանգարանի համատեղ նախաձեռնությամբ տեղի ունեցած երեք վիրտուալ շրջայցերը Հայաստանի պատմության թանգարան, որի ընթացքում ներկայացվել են Հայկական լեռնաշխարհում Հին Արևելքի երկրների մշակութային փոխառնչությունների հազվագյուտ հետքերը, Ուրարտուի պատմամշակութային շքեղ ժառանգության նմուշները, թանգարանի ստորաբաժանումները և ֆոնդերի կառուցվածքը և այլն: Վիրտուալ շրջայցերին մասնակցել են նաև արտասահմանյան բուհերի ուսանողներ:

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել Համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:

«Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» նպատակի *Խնդիր 7.1*-ով սահմանված է. **«Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով»:**

Սահմանված խնդրի 1-ին («Համալսարանի կառուցվածքում ստեղծել հենակետային վարժարան և նպաստել նրա շրջանավարտների ներհոսքին ԵՊՀ») և 2-րդ («Քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար») գործողությունների շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք դեռևս չեն ապահովել ակնկալվող արդյունքը, ինչը պայմանավորված է նաև նրանով, որ ոչ միայն Մինչհամալսարանական կրթության վարչությունը, այլև ԵՊՀ-ն այս հարցերում որոշում կայացնելու լիազորություն չունեն: Թեպետ ԵՊՀ-ն դեռևս չունի հենակետային վարժարան, այնուամենայնիվ նշված վարչությունը գովազդային հայտարարությունների, ինչպես նաև ավագ դպրոցներում իրականացված աշխատանքների միջոցով շարունակել է դիմորդներին դեպի ԵՊՀ ուղղորդելուն և նախապատրաստական դասընթացների ունկնդիրների հավաքագրելուն միտված աշխատանքները:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. **«Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը»:**

Այս նպատակով 2019/2020 ուստարում հրատարակվել են բակալավրիատի կրթական ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող գովազդային նյութեր («Դիմորդի ուղեցույց-2020» ձեռնարկը՝ 1000 տպաքանակով), վերջին տարիներին ԵՊՀ-ում նախադեպը չունեցող, նոր ձևաչափով և բովանդակությամբ տեղեկատվական բուկլետը (10000 տպաքանակով), ինչպես նաև ԵՊՀ-ն և ֆակուլտետները ներկայացնող գունավոր բուկլետները (6000 տպաքանակով): Վարչությունը բոլոր ֆակուլտետների և մի շարք ստորաբաժանումների հետ ակտիվ համագործակցության արդյուն-

քում գրեթե ավարտել էր ԵՊՀ-ի համար նախադեպը չունեցող «Արի՛ ԵՊՀ» էքսպո-
ցուցահանդեսի անցկացման նախապատրաստական բոլոր աշխատանքները, սակայն
մարտի 27-ի նախատեսված ցուցահանդեսը չկայացավ՝ պայմանավորված թագավարա-
կի համաճարակի հետ կապված զարգացումներով:

Մինչհամալսարանական կրթության վարչությունը ԵՊՀ համապատասխան ստո-
րաբաժանումների հետ համագործակցության շրջանակներում բարելավել է դիմորդ-
ների հետ տարվող տեղեկատվական աշխատանքները: Հաշվի առնելով դիմորդներին
հուզող հարցերի բնույթը, հետադարձ կապի որոշ առանձնահատկություններ՝ ԵՊՀ
պաշտոնական կայքում կատարվել են փոփոխություններ, որոնք դիմորդի համար առա-
վել մատչելի են դարձրել բակալավրիատի ընդունելության հետ կապված փաստա-
թղթային և ուղղորդող, կողմնորոշող նյութերը:

Նշված խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում
դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական
տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայ-
նելով մասնակիցների շրջանակը»:*

Հաշվետու շրջանում վարչությունն ավագ դպրոցի աշակերտների համար նախա-
տեսել էր կազմակերպել և իրականացնել ավելի քան մեկ տասնամյակի ավանդույթ
ունեցող օլիմպիադան՝ հանրակրթական տարբեր առարկաների գծով: Այն 5-րդ անգամ
պետք է անցկացվեր 2 փուլով: Թեպետ 2563 աշակերտների (669-ը՝ Երևանից, 1894-ը՝
մարզերից) մասնակցությամբ իրականացվելիք օլիմպիադայի նախապատրաստական
աշխատանքներն ամբողջությամբ կատարվել էին, սակայն այն տեղի չունեցավ, քանզի
օլիմպիադայի մեկնարկից հաշված օրեր առաջ ՀՀ-ում հայտարարվեց արտակարգ դրու-
թյուն:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«ԵՊՀ-ում պարբերաբար կազմա-
կերպել տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ» հանրապետու-
թյան ավագ դպրոցների աշակերտների համար»:*

Հաշվետու ուստարում «Ամառային դպրոց» չի կազմակերպվել, ինչը ևս պայմանա-
վորված է եղել թագավարակի համաճարակի զարգացմամբ, ՀՀ-ում արտակարգ դրու-
թյան իրավական ռեժիմի հայտարարմամբ:

6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ավագ դպրոցների և քոլեջների սովորող-
ների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Հա-*

մալսարան»:

Հաշվետու ուստարում Երևանի 178 և ՀՀ մարզերի 22 դպրոցների 4698 աշակերտների համար կազմակերպվել են (363 ուսուցչի մասնակցությամբ) 139 նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ: Աշակերտներին հնարավորություն է ընձեռվել մասնակցելու Կենսաբանության և Քիմիայի ֆակուլտետներում անցկացվող լաբորատոր փորձերին, ինչպես նաև որոշ դասընթացների: Բացի այդ, 171 աշակերտ հնարավորություն է ունեցել անվճար մասնակցելու «Բանավոր հաղորդակցության մշակույթ» (ԲՀՄ) դասընթացին, որը «Լրագրություն» կրթական ծրագրով ԵՊՀ ընդունվելու համար անհրաժեշտ միասնական քննությունների առարկայացանկում էր:

7-րդ գործողությամբ նախատեսված է. «Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող 'դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով»:

ՀՀ բոլոր մարզերում դիմորդների հավաքագրման նպատակով իրականացված բոլոր աշխատանքները հիմնականում բաժին են հասնում հաշվետու ուստարվա առաջին կիսամյակին, ինչը պայմանավորված է եղել թագավարակի համաճարակի հետ կապված զարգացումներով: ԵՊՀ ներկայացուցիչները սույն գործողությամբ նախատեսված տարաբնույթ միջոցառումների շրջանակներում կատարել են համապատասխանաբար 263 և 18 այց Երևանի ու մարզերի դպրոցներ:

Խնդիր 7.1-ի 8-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ԵՊՀ դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը»:

Արտակարգ դրության իրավական ռեժիմով և համավարակի զարգացման ընթացքով պայմանավորված՝ ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմքով աշխատող դպրոցների քանակի ավելացում չի եղել, սակայն խորացվել է համագործակցությունը ինչպես պայմանագրային, այնպես էլ այլ դպրոցների հետ: Հաշվետու ուստարում ԵՊՀ-ն շարունակել է համագործակցությունը Երևանի 25 և ՀՀ մարզերի 19 ավագ դպրոցների հետ: Հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանը նպաստելու և սեփական ռեսուրսներն առավել նպատակային օգտագործելու նպատակով ԵՊՀ-ն, ի դեմս իր 73

փորձառու դասախոսների, Երևանի 13 դպրոցներում վարել է հատուկ դասընթացներ (1303 ժամ՝ ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին): Այս կամ այն դասընթացի ընտրությունը պայմանավորված է եղել կոնկրետ դպրոցի կրթական կարիքներով, ինչը տվյալ դեպքում վկայում է այն մասին, որ ԵՊՀ նախաձեռնողականությունը միտված է ոչ թե սոսկ կրթական աջակցություն ցուցաբերելուն, այլ այդ աջակցությունը առավել թիրախային դարձնելուն, ինչպես նաև իրական ու հրատապ խնդիրների լուծմանը ծառայեցնելուն:

Խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«ԵՊՀ դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում»:*

Շնորհիվ տարիներ առաջ ձևավորված և հընթացս խորացող համագործակցային մշակույթի՝ Մինչհամալսարանական կրթության վարչությունը ԵՊՀ ֆակուլտետների ղեկանների աջակցությամբ կարողացել է ապահովել դասախոսական լայն կազմի ներգրավումը տարվող աշխատանքներում: Աշակերտների ճանաչողական իմացության բացը լրացնելու, ինչպես նաև դպրոցների կրթական կարիքների բավարարմանը նպաստ բերելու նպատակով Երևանի և մարզային դպրոցներում ԵՊՀ դասախոսները իրականացրել են համապատասխանաբար 57 և 56 դասախոսություն:

Խնդիր 7.2-ով սահմանված է. *«Օպտիմալացնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը»:*

Խնդրի *1-ին գործողությամբ* նախատեսված է. *«Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը»:*

Հաշվետու ուստարում աշխատանքներ են տարվել առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության գործընթացի օպտիմալացման ուղղությամբ: Պլանավորվել և սահմանվել է ընդունելության քննությունները և տեղերի քանակը, աշխատանքներն իրականացվել են հիմք ընդունելով վերջին տարիների ընդունելության արդյունքները և վերլուծությունը, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջները:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Պարբերաբար վերանայել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության կանոնակարգերը և կրթական ծրագրերի ցանկը»:

Այս գործողության կատարմանն ուղղված՝ ԵՊՀ գիտական խորհրդի 2020 թ. մայիսի 26-ի նիստի թիվ 13/2 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2020/2021 ուսումնական տարվա ընդունելության կարգը»: Նույն նիստի թիվ 13/3 որոշմամբ հաստատվել է նաև «Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2020/2021 ուսումնական տարվա ընդունելության կարգը»:

Ինչպես ամեն տարի, հաշվետու ժամանակաշրջանում ևս վերանայվել և հաստատվել են առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրերի ցանկերը: Մասնավորապես՝ ԵՊՀ ԳԽ-ի վերոնշյալ նիստի համապատասխան որոշումներով 2020/2021 ուստարվա համար հաստատվել են առկա ուսուցման 110 և հեռակա ուսուցման 17 կրթական ծրագրեր: Համաձայն վերոնշյալ հաստատված կարգերի՝ 2020/2021 ուստարվա մագիստրատուրայի առկա և հեռակա ընդունելության հայտերն առաջին անգամ ընդունվել են առցանց տարբերակով admission.ysu.am կայքի միջոցով:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Բոլոր մակարդակների կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար աշխատանքներ իրականացնել համապատասխան ընթացակարգերի և աշխատակարգերի կատարելագործմանն ուղղությամբ»:

Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի ընդունելության պլանավորման գործընթացն սկսվեց հաշվետու ուստարվա սեպտեմբերից: Պլանավորման համար հիմք են ծառայել հետևյալ գործոնները.

- վերջին երեք տարիների ընդունելության արդյունքների ամփոփումը,
- անցողիկ միավորների շեմը,
- պահանջարկի ուսումնասիրումը:

Խնդիր 7.3-ով սահմանված է. «Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ»:

Այս խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Ընդլայնել ընդունելության դռնոր երկրների ցանկը, ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ներկայացուցչություններ»:*

Դռնոր երկրների ցանկի ընդլայնման նպատակով շարունակվել են քայլեր ձեռնարկվել Մերձավոր Արևելքի և մի շարք այլ երկրներում ԵՊՀ-ն ներկայացնող տեղեկատու նյութերի տարածման ուղղությամբ: Մասնավորապես, ԵՊՀ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության սփյուռքի բաժնի աշխատակիցների արտասահմանյան գործուղումների ընթացքում, ինչպես նաև միջնորդ կազմակերպությունների միջոցով այդ երկրների հավանական դիմորդների շրջանում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր: Այդ թեմայի առնչությամբ դասախոսություններ են կարդացվել սփյուռքահայ և այլ համայնքներում: 2019 թ. կայացել են հանդիպումներ Հայաստանում Իրաքի Արաբական Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են ԵՊՀ ուսումնական ծրագրերը և քայլեր ձեռնարկվել այդ երկրներից դեպի Երևանի պետական համալսարանի դիմորդների ուղղորդման դյուրացման ուղղությամբ: Միաժամանակ, Իրաքում ՀՀ դեսպանի աջակցությամբ սկսվել է գործընթաց Իրաքի բարձրագույն կրթության նախարարության կողմից ԵՊՀ-ն՝ որպես միջազգային չափանիշներին համապատասխանող բուհ ճանաչելու ուղղությամբ, և արձանագրվել է դրական արդյունք: Ներկայումս աշխատանքներ են տարվում նշված նախարարության կայքում այդ որոշման տեղադրման ուղղությամբ:

Միջնորդ կազմակերպության կողմից Իրաքի Հանրապետության հեռուստատեսության միջոցով հեռարձակվել են գովազդային նյութեր Երևանի պետական համալսարանի մասին, կազմակերպվել են այլ բնույթի միջոցառումներ:

Խնդիր 7.3-ի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար»:*

2019 թ. կնքվել է երեք նոր պայմանագիր՝ նորվեգական «Keystone Academic Solutions», հայաստանյան «Կարեն Ղազարյան» ԱԶ և Արաբական Միացյալ Էմիրություն-

ներում գործող «Al Amal Consulations and Educational Services» կազմակերպությունների հետ Մերձավոր Արևելքի երկրներում ուսանողներ հավաքագրելու նպատակով: Ներկայումս բանակցություններ են վարվում լիբանանյան (Բեյրութ) «Studypedia - Study Abroad Services» ընկերության հետ նմանատիպ պայմանագիր կնքելու նպատակով:

Միջնորդ կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ-ում Իրաքի և Եգիպտոսի դեսպանատներում՝ հետագայում ուսանողների հավաքագրման և դեպի ԵՊՀ ուղղորդելու գործընթացի դյուրացման նպատակով:

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Համալսարանի կայքում ներկայացնել ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր»:

Հրատարակվել և վերահրատարակվել է ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ընդունելության և ուսումնառության պայմանների, համալսարանի, նրա կրթական ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատու-ուղեցույցը, որը արտերկիր գործուղվող ԵՊՀ աշխատողների, ՀՀ ԿԳՄՍ նախարարության սփյուռքի բաժնի միջոցով տարածվել են օտարերկրյա պետություններում հավանական դիմորդների շրջանում: Նշված նյութերը տեղադրվել են նաև համալսարանի կայքում: ԵՊՀ կայքում լրացուցիչ նյութեր են տեղադրվել կորոնավիրուսային համավարակի պայմաններում ուսանողների փաստաթղթերի ներկայացման, ընդունելության, ժամկետների և դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

Միաժամանակ, 2019/2020 ուստարում վերամշակվել և թարմացվել է տեղեկատու-ուղեցույցը: Այդ նպատակով 2019 թ. ընթացքում կատարվել էր ուսումնասիրություն՝ պարզելու համար ԵՊՀ ֆակուլտետների բակալավրիատում և մագիստրատուրայում անցվերենով առկա, ինչպես նաև հեռավար (distance-learning կամ e-learning) ուսուցման հնարավորությունները: Ուսումնասիրության արդյունքում ֆակուլտետների կողմից ներկայացվել են բակալավրի հինգ և մագիստրոսի տասը մասնագիտությունների՝ անցվերենով ուսուցման կրթական ծրագրեր: Դրանց վերաբերյալ տվյալները փոխանցվել են նաև որոշ միջնորդ կազմակերպությունների՝ ուսանողների հավաքագրման նպատակով: Միաժամանակ, ՀՀ և ՉԺՀ պաշտպանության նախարարությունների առաջարկությամբ ֆակուլտետների կողմից մշակվել և ներկայացվել են ինը մասնագիտությունների գծով հատուկ մեկամյա ռուսերենով և անցվերենով ուսուցման մագիստրոսա-

կան ծրագրեր, որոնց ուղղությամբ ընդունելությունը նախատեսված էր իրականացնել 2020/2021 ուսումնական տարվանից:

Դեռևս 2017/2018 ուսումնական տարում ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում սկիզբ է դրվել «Ֆարմացիա» մասնագիտությամբ անգլերենով առկա ուսուցմանը:

Կորոնավիրուսային համավարակի պայմաններում համագործակցության անընդատությունն ապահովելու նպատակով Նուր-Սուլթանի (Ղազախստան) Եվրասիական ազգային համալսարանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել այդ համալսարանի 21 մագիստրանտի ուսուցումը 2020 թ. հոկտեմբերից հետավար ձևով կազմակերպելու շուրջ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև ԱՄԷ Ալ-Քասիմիյե համալսարանի հետ արաբերենի հետավար դասընթացներ կազմակերպելու առնչությամբ:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Կատարելագործել նախապատրաստական կրթական ծրագրերը՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար»:

Սույն գործողության շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները. վերանայվել և բարեփոխվել են նախապատրաստական կրթական ծրագրերը, դասընթացների կազմակերպումն իրականացվել է նոր ձևաչափերով, բոլոր առարկայական ծրագրերը նորացվել և համապատասխանեցվել են ընդունելության չափանիշներին: Դասընթացները կյանքի են կոչվել երկփուլ տարբերակով, որոնցից առաջինը տարրական գիտելիքների յուրացման, իսկ երկրորդը հիմնական կրթական գիտելիքները ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու փուլն է: Հաշվի առնելով օտարերկրյա դիմորդների լեզվական գիտելիքների մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը՝ 2019/2020 ուսումնական տարվանից ավելացվել են «Հայոց լեզու» առարկային տրամադրվող դասաժամերը:

**VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Ռազմավարական 8-րդ նպատակի 8.1. խնդրով սահմանված է. «Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական ծրագրերին մասնակցության ընդլայնման միջոցով»:

Վերջին 5 տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումների ծավալները ավելացել են կրթական, գիտական և այլ ծրագրերի (մասնավորապես՝ արտերկրում հայագիտության զարգացման, միջազգային օլիմպիադայի կազմակերպման և այլ նպատակներով) իրականացման համար:

Ստորև ներկայացվում են պետական բյուջեից ֆինանսավորումները 2016-2020 թթ. ժամանակահատվածի համար:

հազար ՀՀ դրամ

2016	2017	2018	2019	2020 (նախնական)
3,110,286	3,129,626	3,051,716	3,380,829	3,356,932

Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումից պետական ֆինանսավորումը 2020 թվականին ավելացել է նախորդ տարիների համեմատ՝ ի հաշիվ մեկ ուսանողի համար սահմանված ուսանողական նպաստի ավելացման: Միաժամանակ, նախորդ տարիների համեմատ նվազել է պետական ֆինանսավորմամբ սովորող ուսանողների թիվը: Այն պայմանավորված է տասներկուամյա կրթական ծրագրի ներդրմամբ, որի պատճառով 2019 թվականին կրճատվեց ավագ դպրոցների շրջանավարտների թիվը:

2016	2017	2018	2019	2020 (01/09/2020 դրությամբ)
Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումից պետական ֆինանսավորման չափը (հազար ՀՀ դրամ)				
1,523,812	1,549,670	1,496,867	1,424,115	1,651,030
Պետական ֆինանսավորմամբ սովորող ուսանողների թիվը				
2,350	2,360	2,340	2,226	2,118
Պետական ֆինանսավորման չափը 1 ուսանողի համար (հազար ՀՀ դրամ)				
648	657	640	640	780
Հետբուհական մասնագիտական կրթական ծառայությունների մատուցումից պետական ֆինանսավորման չափը (հազար ՀՀ դրամ)				
83,000	79,587	79,734	78,721	100,275
Պետական ֆինանսավորմամբ սովորող առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների թիվը				
380	375	364	347	319
Պետական ֆինանսավորման չափը 1 ասպիրանտի համար (հազար ՀՀ դրամ)				
218	212	219	227	314

Գիտական և գիտատեխնիկական ծրագրերի ֆինանսավորումները պայմանավորված են ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարվող գիտական դրամաշնորհային ծրագրերի քանակով, ժամկետներով և ֆինանսավորման չափերով: Մասնավորապես, 2018 թվականին թեմատիկ (պայմանագրային) դրամաշնորհային ծրագրերի մրցույթները հայտարարվեցին տարեվերջին, որի պատճառով այդ տարվա թեմատիկ ծրագրերի տարեկան ֆինանսավորման չափը ավելի քան 200 միլիոն ՀՀ դրամով նվազեց ուրիշ տարիների համեմատ: 2019 թվականին փոխվեց գիտական դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ հարկային քաղաքականությունը, համաձայն որի՝ դրամաշնորհային ծրագրերը չեն ազատվում ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), եթե ծրագրի իրականացման որևէ փուլում կատարվում է ծառայությունների թեկուզև անհատույց մատուցում: Արդյունքում ծրագրերի շրջանառություններն ավելացվեցին 20 տոկոսով՝ ԱԱՀ-ի չափով: 2020 թվականին կրճատվեցին գիտական ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ծրագրերի քանակը և ֆինանսավորման չափերը:

Գիտական ծրագրերի պետական ֆինանսավորում (հազար ՀՀ դրամ)					
Ծրագիր	2016	2017	2018	2019	2020 (նախնական)
Ենթակառուցվածքների պահպանում և զարգացում	575,082	565,674	587,135	768,465	505,000
Թեմատիկ (պայմանագրային)	314,258	336,435	113,229	393,741	368,000
Նպատակային հետազոտական	9,567	15,119	8,299	8,400	8,400
Գիտական աստիճանների համար սահմանված հավելվածարներ	127,325	133,050	119,169	133,375	117,000
Ազգային արժեքների պահպանում և զարգացում	10,000	10,000	9,300	9,300	9,300
Ընդամենը	1,036,232.9	1,060,277.6	837,131.7	1,313,280.5	1,007,700.0

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով»:

Ուսման վարձավճարներից գոյացող միջոցները կազմում են ԵՊՀ բյուջեի ամենամեծ մասը, հետևաբար խիստ կարևոր է ուսման վարձաչափերի վերանայումը: 2016-2020 թթ. ժամանակահատվածում ուսման վարձաչափերի վերանայում (բարձրացում) կատարվել է 2016/2017 և 2020/2021 ուսումնական տարիներին:

Ներկայացվում է վերջին 5 տարիների ընթացքում ԵՊՀ բյուջեում ուսման վարձերից գոյացող միջոցների տեսակարար կշիռը.

ԵՊՀ բյուջե	2016	2017	2018	2019	2020 (նախնական)
Ընդամենը եկամուտ (հազար ՀՀ դրամ), որից՝	11,631,288	11,320,469	9,903,210	10,331,992	9,368,000
Ուսման վարձերից եկամուտ (հազար ՀՀ դրամ)	6,373,690	6,411,906	5,810,667	5,519,679	5,460,000
Տեսակարար կշիռը	55 %	56 %	58 %	53 %	58 %

Խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին»:

ԵՊՀ բյուջեում էական մաս են կազմում ոչ պետական բյուջեի միջոցներից ձևավորվող դրամաշնորհային ծրագրերից ստացվող ֆինանսավորումները: Դրամաշնորհային ծրագրերի իրականացումը նպաստում է աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը, գործուղումների և ՀՀ պետական բյուջե հարկերի տեսքով վճարումների ավելացմանը, ուսանողների մասնակցությանը ծրագրերին և այլն:

Ներկայացվում է վերջին 5 տարիների ընթացքում ԵՊՀ բյուջեում դրամաշնորհային ծրագրերի տեսակարար կշիռը.

ԵՊՀ բյուջե	2016	2017	2018	2019	2020 (նախնական)
Ընդամենը եկամուտ (հազար ՀՀ դրամ), որից՝	11,631,288	11,320,469	9,903,210	10,331,992	9,368,000
Դրամաշնորհային ծրագրերից եկամուտ (հազար ՀՀ դրամ)	750,940	654,585	421,996	738,247	502,000
Տեսակարար կշիռը	6.5 %	5.8 %	4.3 %	7.1 %	5.3 %

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները»:

ԵՊՀ կանոնադրական նպատակներով իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից վճարովի այլ ծառայությունների եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջեում էական չէ. այն միջինում տարեկան կազմում է շուրջ 2.5 տոկոս: 2020 թ., պայմանավորված երկրում առկա համավարակով և հայտարարված ռազմական դրությամբ, գրեթե դադարեցվեցին ուսանողական հանրակացարանի, մարզասրահի, տարածքների վարձակալությունների, հյուրերի տան, ուսումնասարտադրական բազաների և այլ ծառայությունների: ԵՊՀ-ի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների շրջանառությունն ավելացնելու, այդ ուղղությունը խթանելու նպատակով կատարվել և կատարվում են էական ներդրումներ, որոնց արդյունքում տարեցտարի ավելացել են եկամուտները, բացառությամբ 2020 թվականի: Մասնավորապես, հիմնանորոգվել են ԵՊՀ մարզահամալիրը (ծախսը՝ շուրջ 1.5 միլիարդ դրամ) և ուսանողական հանրակա-

ցարանը, որը, բացի հիմնանորոգումից, նաև ամբողջությամբ կահավորվել է (ներդրված գումարը գերազանցել է 1 միլիարդ դրամը): 2019 թ. տարեվերջից մեկնարկել են Բյուրականում ԵՊՀ ուսումնասարտադրական բազայի հիմնանորոգման և կահավորման աշխատանքները, որոնք դեռ ավարտին չեն հասցվել՝ պայմանավորված երկրում ստեղծված իրավիճակով:

Ներկայացվում է վերջին 5 տարիների ընթացքում վճարովի այլ ծառայությունների եկամուտները.

Ծառայություններ	2016	2017	2018	2019	2020 (նախնական)
Լրացուցիչ կրթական և գիտական	102,979	98,488	98,008	109,827	70,000
Ուսումնասարտադրական բազաներում մատուցվող	27,639	34,834	32,111	44,440	15,000
Հյուրերի տան	0	11,932	15,421	6,495	1,000
Ուսանողական հանրակացարանի	0	1,588	0	5,785	6,000
Մարզասրահի	1,431	24,907	52,792	63,490	35,000
Տարածքի վարձակալությունների	11,336	13,561	11,740	12,227	4,000
Ատամնաբուժարանի	11,449	11,256	2,827	0	0
Փաստաթղթերի ձևակերպումների	4,085	4,456	5,188	4,057	4,000
Քննությունների կազմակերպման	37,947	31,687	35,797	42,139	30,000
Ընդամենը	196,867	232,709	253,886	288,465	165,000

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները»:

ԵՊՀ-ում առանձին ստորաբաժանումների կողմից իրականացվող գիտակրթական ծրագրերին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով ԵՊՀ շրջանավարտների և այլ շահառուների հետ տարվում են գործընկերային աշխատանքներ, մասնավորապես.

- Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կազմում «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» պահպանման, զարգացման և իրականացվող ծրագրերին իրենց աջակցությունն են ցուցաբերել «Իմքս Գրուպ», «Ավանգարդ», «Գազպրոմ Արմենիա», «Տաշիր բարեգործական հիմնադրամ» ընկերությունները, ինչպես նաև այդ ֆակուլտետի շրջանավարտ անհատ անձինք :
- Իրավագիտության, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների ուսանողներին միջազգային օլիմպիադաներին մասնակցելու նպատակով ֆինանսական աջակցությունն են ցույց տվել «Տավիտիան» հիմնադրամը, «Զանգեզուրի ՊՄԿ», «Կարմիր խաչի միջազգային կոմիտե», «Հայկական ծրագրեր» ընկերությունները:
- Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի կողմից իրականացվող միջազգային գիտաժողովի կազմակերպման համար ֆինանսական աջակցություն է ցուցաբերել «Հետազոտական մաթեմատիկա» ընկերությունը:
- Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «Գերմեժ ինտեգրալ սխեմաների նախագծում» կրթական ծրագիրն իրականացվում է «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի պատվերով և ֆինանսական աջակցությամբ:
- Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի լսարանների կահավորման և սարքավորումների ձեռքբերման նպատակով աջակցել են «Արցախբանկ» ՓԲԸ-ն, «Ռենկո Արմենիա վալորե» ՍՊԸ-ն:
- Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման համար մշտապես աջակցում է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր»:*

Բիզնես ծրագրերի իրականացման արդյունքում ավելացել են ԵՊՀ վճարովի ծառայությունների գծով եկամուտները, որոնց մասին նշվել է 8.1.4. կետում: Մինչև ՀՀ-ում համավարակի տարածումը իրականացվել են մարզասրահների, հյուրերի տան, ուսանողական հանրակացարանի վճարովի ծառայություններ:

Ներկայումս իրականացվում են Բյուրականում և Ծաղկաձորում գտնվող ԵՊՀ ուսումնասարտադրական բազաների հիմնանորոգման և կահավորման աշխատանքները՝ վճարովի ծառայությունների շրջանառությունը ավելացնելու նպատակով:

Խնդիր 8.2-ով սահմանված է. «Զարգացնել Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը»:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Զարգացնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով»:

Ֆինանսական գործունեության հաշվառման, նյութական և ոչ նյութական ռեսուրսների տեղեկատվության և ծրագրային ապահովման նպատակով ներդրվել է «Հայկական Ծրագրեր, 7-րդ տարբերակ» հաշվապահական ծրագիրը: Աշխատողների և ուսանողների անալիտիկ (մանրամասնեցված) հաշվառման նպատակով ներդրվել է «Հայկական Ծրագրեր-Ձեռնարկություն» ծրագիրը:

Խնդիր 8.2-ի 3-րդ գործողությամբ նախատեսված է. «Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը»:

ԵՊՀ հաշվապահության, Գնումների կազմակերպման վարչության և Անձնակազմի կառավարման բաժնի աշխատողները մասնակցել են վերապատրաստման դասընթացներին և ստացել վկայականներ:

Սահմանվել են հաշվապահական ծառայության գործառույթների իրականացման ընթացակարգերը:

Բոլոր աշխատողների համար կազմվել են աշխատանքային անձնագրեր, որոնցով սահմանվել են տվյալ հաստիքների համար պահանջվող ունակությունները և պարտականությունները:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և իրականացնել ռեսուրսահնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր»:

Ռեսուրսահնայողության համար իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- Մասնաշենքերում լամպերը փոխարինվել են «LED» լուսատուներով, բոլոր մասնաշենքերում տեղադրվել են մետաղապլաստե նոր դռներ և պատուհաններ,
- Ներդրված «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի շնորհիվ նվազել է թղթի ծախսը:
- Կրճատվել են ծառայողական նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների թվաքանակը և համապատասխան հաստիքները:

Խնդիր 8.3-ով նախատեսված է. «Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. «Օպտիմալացնել Համալսարանի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը»:

Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժնի ու ԵՊՀ գիտական հանդեսների տեխնիկական աշխատանք իրականացնող խմբագրությունների գործունեության արդյունավետության և հաշվետվողականության բարձրացման նպատակով 2020 թ. մարտի 12-ի գիտական խորհրդի 11/4 որոշման համաձայն այդ կառույցները ներառվել են ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության կազմում:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. «Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ»:

Այս գործողության ուղղությամբ կատարվել է որոշակի աշխատանք: Մասնավորապես, ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետների, ամբիոնների) ներքին աուդիտը փոխարինվել է նրանց իրականացրած հիմնական գործունեության (կրթական ծրագրերի մատուցման) որակի մշտադիտարկմամբ և վերանայմամբ: Ըստ այդմ՝ 2019/2020 ուստարում մշտադիտարկվել են (համապատասխան բոլոր գործընթացներով) ԵՊՀ առկա ուսուցման ավարտական կուրս ունեցող մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերը: Այդ մասին ավելի մանրամասն ներկայացված է սույն զեկույցի «Որակյալ կրթություն» բաժնի Խնդիր 1.3-ի 2-րդ գործողության վերաբերյալ հատվածում:

Խնդրի 7-րդ գործողությամբ նախատեսված է. «Ստեղծել տեղական և արտերկրյա բուհերի հետ ինստիտուցիոնալ համեմատական գնահատման (բենչմարքինգ) համակարգ»:

Այս գործողության կատարմանն ուղղված աշխատանքների մասին տե՛ս է սույն զեկույցի Խնդիր 1.2.4-ին և Խնդիր 9.1.2-ին վերաբերող հատվածները:

Խնդրի 8-րդ գործողությամբ նախատեսված է. «Զարգացնել Համալսարանի տեղեկատվական համակարգերը»:

ԵՊՀ-ում (ինչպես և այլուր) տեղեկատվական համակարգերի զարգացումը շարունակական և անընդհատ գործունեություն է ենթադրում, մասնավորապես՝ հաշվետու ուստարում ներդրվել է ԵՊՀ էլ-փոստ հավելվածը, ԵՊՀ ուսման վարձերի հաշվառման համակարգը անցում է կատարել «ՀԾ» հաշվապահական ծրագրին, շարունակվել է

mulberry-ի հավելվածի ինտեգրումը ԵՊՀ-ում փաստաթղթաշրջանառության կազմակերպման գործում, ստեղծվել և ներդրվել է մագիստրատուրայի ու հեռակա բակալավրիատի դիմորդների գործերի առցանց ընդունման հարթակ: Covid-2019-ի հետ կապված՝ պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին հնարավորություն է ընձեռվել արագ ինտեգրվել և մասնակցել հեռավար դասապրոցեսին e-learning.yasu.am կայքի միջոցով, որը գործում է Moodle համակարգի հենքի վրա:

Շարունակվում են ուսումնական գործընթացների կառավարման Supervision, հեռավար ուսուցման Moodle և ուսման վարձերի համակարգերի միջև կապի ստեղծման և սովյալների սինխրոնացման ավտոմատ համակարգ-հավելվածի նախնական ծրագրման և հետագայում՝ գործարկման ուղղությամբ:

Նշված խնդրի *9-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը համալսարանական կառավարման գործընթացներում»:*

Ավանդաբար ուսանողները մասնակցում են ԵՊՀ կառավարման գործընթացներին: Մասնավորապես, 22 ուսանող ընդգրկված է ԵՊՀ գիտական խորհրդում (ակադեմիական խորհրդում), իսկ 8-ը՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում (կառավարման մարմնում): Երկու ուսանող ընդգրկված է ուսանողների փոխատեղման հանձնաժողովում: ԵՊՀ ինքնագնահատման նպատակով իրականացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացում ներգրավված են եղել 10 ուսանող:

Խնդիր 8.4-ով սահմանված է. *«Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»:*

Այս խնդրի իրագործմանն ուղղված *2-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը»:*

Գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար բարձրացնելու նպատակով հաշվետու ուստարում բազմաթիվ մեթոդներ են մշակվել: Յուրաքանչյուր ստուգարքից և քննությունից հետո բոլոր ուսանողների համալսարանական էլեկտրոնային փոստին ավտոմատ եղանակով ուղարկվում է նրանց ստացած գնահատականի մասին տեղեկատվություն,

ինչպես նաև յուրաքանչյուր քննաշրջանից հետո ուղարկվում է ակադեմիական տեղեկագիրը:

Ուսանողներին իրազեկելու նպատակով նույն եղանակով նրանց համալսարանական էլեկտրոնային փոստին ուղարկվում են նաև դասատախտակը, քննաշրջանի ժամանակացույցը և ուսումնական գործընթացին վերաբերող այլ տվյալներ: Այս ամբողջ գործընթացն իրականացվում է «ԵՊՀ ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի» միջոցով:

Խնդրի *3-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը Համալսարանի կառավարման համակարգում»:*

Հաշվեռու ուստարում ԵՊՀ աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ բարձրացնելու նպատակով նրանց էլեկտրոնային հասցեներին յուրաքանչյուր ուրբաթ ուղարկվել է տեղեկատվական նամակ՝ տեղի ունենալիք միջոցառումների նկարագրությամբ: Միաժամանակ, համալսարանական wiki-ում պարբերաբար տեղադրվել են ուսումնական գործընթացին վերաբերող նյութեր:

Վերոնշյալ խնդրի *5-րդ գործողությամբ* նախատեսված է. *«Քննարկել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում»:*

ԵՊՀ գիտական խորհրդում պարբերաբար ներկայացվում և քննարկվում են ուսանողական հարցումների արդյունքները: Հարցումներում անդրադարձ կա նաև կոռուպցիայի վերաբերյալ տվյալների հավաքագրմանը և տարածմանը:

IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

«Միջազգայնացում և գործակցություն» ռազմավարական նպատակի 9.1. *խնդրով* սահմանված է. «*Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը*»:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել միջազգայնացման գործընթացների գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմ, դրանց հիման վրա երկամյա պարբերականությամբ իրականացնել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ)»:

Այս գործողությանը համապատասխան՝ ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել է ներքին բենչմարքինգ՝ շարժունությունը գնահատելու համար: Նորկոթոնավիրուսային համավարակի տարածման պատճառով 2019/2020 ուստարում շարժունության ընդհանուր թիվը նվազել է: Համագործակցության շրջանակներում իրականացվող փոխանակման ծրագրերում հաշվետու ուստարում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 48 ուսանող, 3 դասախոս և 3 վարչական աշխատող:

ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 18.11.2019 թ. N 214/17 հրամանով հաստատվել է Էրազմուս+ հիմնական գործողություն 1-ի շրջանակներում ուսումնառության, դասավանդման և վերապատրաստման կարգը, որի հիման վրա կազմակերպվում են փոխանակման ծրագրերը:

3-րդ գործողությամբ նախատեսված է. «Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները»:

Այս գործողությամբ նախատեսված՝ միջազգայնացման գործընթացների պատասխանատուների ինստիտուտը գործում է բոլոր ֆակուլտետներում: Վերջին երեք տարիների ՄՀՎ ձեռքբերումներից կարելի է համարել մի շարք ֆակուլտետներում (օր.՝ Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Տնտեսագիտության և կառավարման, Սոցիոլոգիայի և այլն) միջազգային համագործակցության գծով փոխդեկանների պաշտոնների ստեղծումը, ինչը հնարավորություն է տվել մշտական կապ ապահովելու համալսարանի միջազգայնացման կենտրոնական ենթակառուցվածքի և առանձին գի-

տակրթական ստորաբաժանումների միջև: Միջազգային գծով պատասխանատուներն օգնում են նաև տարբեր ծրագրերի շուրջ տեղեկատվությունը, ինչպես նաև դրանց շրջանակներում նախատեսվող միջոցառումները տեղերում կազմակերպելու և համակարգելու գործում: Ուսումնական տարվա ավարտին պատասխանատուները խրախուսվում են՝ ժամավճարային հիմունքներով վարձատրվելով:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել միջազգայնացման աջակցության համացանցային պորտալ և վիրտուալ պլատֆորմ»:*

ԵՊՀ կայքում պարբերաբար թարմացվում է միջազգայնացմանն առնչվող տարբեր ուղղությունների, հետազոտության, միջազգային շարժունության, այդ թվում՝ Էրագմուս+ ծրագրի և միջբուհական համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ, ԵՊՀ կայքում տեղադրվել է 122 հայտարարություն:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. *«Իրականացնել միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում»:*

Հաշվետու ուստարում ԵՊՀ աշխատողները մասնակցել են Լեհաստանի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի գործընկեր համալսարաններում կազմակերպված վերապատրաստման դասընթացների:

Խնդրի 6-րդ գործողությամբ նախատեսված է. *«Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ»:*

Այս գործողությամբ նախատեսված հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտը, ցավոք, չի հաջողվել ստեղծել: Միննույն ժամանակ, տարբեր միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում բազմաթիվ օտարերկրյա պրոֆեսորներ մասնակցում են ԵՊՀ ուսումնական գործընթացին, մասնավորապես՝ դասավանդում են Սոցիոլոգիայի, Իրավագիտության, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետներում և այլն:

Խնդիր 9.2-ով սահմանված է. «Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում»:

Խնդրի 1-ին գործողությամբ նախատեսված է. *«Ներդնել թիրախային օտարալեզու կրթական ծրագրեր և մոդուլներ»:*

Այս գործողությամբ նախատեսված՝ կազմակերպվել են օտար լեզուներով (ռուսերեն և անգլերեն) դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար: ԵՊՀ-ում առկա է 48 օտարալեզու կրթական ծրագիր, որոնցից 31-ը՝ մագիստրոսի, 7-ը՝ բակալավրի, 10-ը՝ ասպիրանտի: Հաշվետու ժամանակահատվածում գործել է 6 կրթական ծրագիր (բակալավրի՝ 1, մագիստրոսի՝ 2 և ասպիրանտի՝ 3): Ուսանողների առկայության դեպքում կիրառելի կլինեն բոլոր կրթական ծրագրերը:

ԵՊՀ կայքում հասանելի է և պարբերաբար թարմացվում է ֆակուլտետներում կազմակերպվող օտարալեզու դասընթացների ցանկը:

Խնդրի 2-րդ գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել և ընդլայնել ամառային կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրերը»:*

Հաշվետու ուստարում ամառային դպրոցների կազմակերպումը չի հաջողվել իրականացնել կորոնավիրուսային համաճարակի բռնկման պատճառով:

Նշված խնդրի 3-րդ գործողությամբ նախատեսված է. *«Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանը: Խթանել ներգնա և արտագնա շարժունությունը»:*

ԵՊՀ կայքում պարբերաբար տեղեկատվություն է տեղադրվում փոխանակման ծրագրերի վերաբերյալ: Ավելին, փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ԵՊՀ ուսանողներն ու աշխատողները պարբերաբար ստանում են նաև իրենց էլեկտրոնային փոստով, ինչն էականորեն նպաստում է այդ ծրագրերին դիմողների թվի աճին:

Խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. *«Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ»:*

Այս գործողության իրականացման նպատակով մեկնարկել են կրկնակի դիպլոմով ծրագրեր Ֆրենչ Կոնտե համալսարանի հետ՝ կենսաբանության, ֆիզիկայի բնագավառներում: Տնտեսագիտության բնագավառում մեկնարկել է կրկնակի դիպլոմով ծրագիր Ման Խոսեի համալսարանի հետ: Հաշվետու ուստարում ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի շրջանակում իրականացվող կրկնակի դիպլոմով ծրագրի դիմորդների թիվը թեև չափազանց փոքր էր, սակայն, այդուհանդերձ, ծրագիրն իրականացվեց: Նախորդ տարիներին հաջողությամբ իրականացվել էին ծրագրեր միջազգային հարաբերությունների, կառավարման, զբոսաշրջության բնագավառներում: